



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

151.7

9-55



136.7
2-61

286

14 JUL 2009

ԹՈՂԱՎՐԴԵԿՆ ՄԻՆԿՎԵՐԺԵԿՆ ԳՐԵԳՈՐԵ

151.7
2-55 ար.



ՄԱՍԻԿՅԱՐԻ ԱՏԵԿՈՒՄԻԹԻՒՆ
ԵՒ ԱՐ ԱՊԱՀԱ ԱՊԵԼԻ ՄԻՋՅԱՆԻ

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ

ԱՐԵՎԱՆՔՐԱԳՈԼ
Տպարան Գերգ Ս. Մանուկանցի
1903

7 JUL 2013

3960

55

078

12-1200

370

2254-21

I.

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Ноября 1902 г.

«Երբ սկիտի տուն ու տեղ լինիմ, օջախ կազմեմ,
հալալ ապրիմ և աշխ զրաից կտրեմ». շատ անգամ լուսն
էր դուք կեանքի գժուարութիւններից բեզարած, չահել
տղաների բերանից:

—Այս Աստուած, զու ինձ առողջութիւն տուր,
զործիս յաջողութիւն, որ զոնէ կարողանամ որդիններիս
պահել պահպանել, սովից, ցըտից ազատել—յաճախ
ասում են ընտանիքի տէր մարդիկ: —

«Ճուտ անենք պսակենք, ոտները կապենք, որ
տուն բերէ». իրանց ցաւերը միմեանց պատմելիս, ասում
են պառաւ տատերը: Նրանք ուրախութեամբ ցանկա-
նում են թոռներին կնոշ, տան, տեղի, փոքրիկ բալիկ-
ների տէր դարձնել: Այս ու վախ են քաշում շրեր
կանայք, անարդի հայրեր. «Ի՞նչ կըլինի ով Աստուած,
մեզ էլ մի գաւակ տայիս և մեր օջախի ծուխը չըկըտ-
րէիր այս աշխարհից», ազօմքի մէջ մըմնչում են նրանք:
Քանի քանի որքայրի կանայք օրերով արին քրտինք
թափելով հաց են թխում, լուացը անում, ծանր ծանր
գժուար զործերի զնում, ուրիշների դոներին քաշ գա-

լիս ինչ է մի կտոր հաց ճարեն, իրանց սիրասուն որդիներին պահեն, մեծացնեն, մարդ դարձնեն, օջախ մխացնեն:

Այս ամերը, ամերը աշխատում են որդիներ ունենալ, սերունդ առաջ բերել, որ իրանց յիշատակն աշխարհից չկտրեն, օջախի ծուխը, տան ճրագը շրհանգնեն:

Որդիներ ունենալ, պահել, մեծացնել և որչափ կարելի է նրանց ապագան լաւացնել՝ ահա ամերի փափարը, ահա ամերի ձղուումը: Այս բնական օրէնք է ոչ միայն մարդկանց, այլև կենդանիների համար:

— Տղան տան ծաղիկն է, ասում է ժողովրդական առածը. առանց տղայի տունը հանգած, մարած և տիսուր է՝ ինչպէս առանց զրի ջրաղացը աւերակ, անօպուտ է:

«Ել ինչ տուն է, որ տղայ չունենայ. ճիշդ է, նա շատ դժուարութիւններ, նեղութիւններ, ապագայ հողսկը ունի, բայց և այնպէս առանց նրան չի լինիլ. նա փուշ է, բայց պուպուշ է»:

Հնայելով այդ բոլորին, կան ծնողներ, որոնք անէծքաչոր են անում, դատապարտում, մեղադրում և ամեն տեսակ գժգոհութիւններ են ցոյց տալիս, իրանց անարժան տղաներին. անզամ անիծում են այն օրը, այն վայրկեանը, երբ նրանք աշխարհ են եկել: Տղաներն էլ նոյն կերպ անիծում են ծնողներին, իրանց աշխարհ բերելու համար: Ի՞նչպիսի հակառակութիւն. բայց ինչու այսպիսի հրէշաւոր բաներ. ինչու առաջնները իրանց որդիների վրայ ուրախացած գոհ սրտով գոփում, փառարանում են, իսկ սրանք դրա հակառակ չը գիտեն թէ ինչ անեն, որ որդոց ձեռքից ապատուեն. Դուք զիտէք, սիրելի ընթերցող, որ երկու կողմի մարդ-

կանց ասածները ճիշդ են: Մեզանից շատ շատերը, ամեն օր այդպիսի բաներ տեսել, լսել, կարդացել են: 2Է որ մարդասպանները, գողերը, աւազակները, ստախօսները, արբեցող մարդիկ, ամեքն էլ որդիներ են եղել, երբեմն իրանց տան ուրախութիւնն ու ծաղիկը. իսկ այսօր ոչ թէ միայն ծնողների, այլև հարևանների բարեկամների և բոլոր ժողովրդի ատելին ու վնասակար անդամը. հինց այդ պատճառով դրանցից շինասուելու համար, օրէնքով նրանց պատժում, բանդարկում կամ տարիներով հեռացնում են:

Դրանց բոլորի պատճառը պիտի աշխատենք իմանալ պակասութիւնների աղբիւրը գտնել ու տեղնուանեղը առաջն առնել: Այդ պատճառները շատ շատ են և այնչափ բարդ, որ դժուար է միանգամից ամենի մասին խօսել. զրա համար այս անգամին այդ պատճառների միայն մէկի այն է՝ մանուկների ստախօսութեան նրանից առաջ գալիք չարիքների և առաջն առնելու միջոցների մասին եմ խօսելու: Որպէսզի երեխաների ստախօսութիւնն աւելի պարզ ու հասկանալի լինի, աւելորդ չեմ համարում այստեղ մի քանի բացատրութիւններ առալ, ապա խսկան խնդրին անցնել:

Միայն այն մարդը կարող է մանկան առաւել, պակաս կողմերը լաւ հասկանալ, ով նրան ճիշդ ճանաչում է. իսկ այս բանը կարելի է ձեռք բերել ուշի ուշով զննողութեամբ և զիտութեան տուած հաստատուն փաստերը զիտենալով: Դիտութիւնը, մարդկանց հազարաւոր տարիների փորձերը, մեզ ասում են. ամեն մարդու մէջ կայ ժառանգական առաւել, պակաս յատկութիւններ: Սրանք կապուած են մարդու ուղեղի, նեարդերի, մկանունքների և բոլոր կազմուածքի հետ: Նոյնպէս մեզ ասում են: Ճրշապատողների լաւ, վատ,

օգտակար, վնասակար, վարժունքը միշտ և ամեն ժամանակ ծննդեան օրից սկսած մինչեւ մահը, մարդկանց բնաւորութեան վրայ ազդում են: Այս բաների մասին գեռ Քրիստոսից առաջ զանազան կարծիքներ կային. նշանաւոր յոյն փիլիսոփայ Պլատոնն ասում էր: Մանկան հոգին, ծեելիս իր ապագայ զործելու, մտածելու, առաջ գնալու մաքի պաշարը, հետն է բերում. այսինքն մանուկը որշափ էլ մեծանայ, կարգայ, սովորի, մարդկանց հետ զործ ունենայ՝ էլի նա ոչ մի նոր բան ձեռք չի բերէ, չի սովորի, այլ նրա զլխի մէջ ամեն բան կայ հետը բերած և հէնց այդ բերածներն են, որ զրսի, չորս կողմի առարկաների, մարդկանց հետ շփուելով՝ մեծանում, զարգանում և հասունանում են. ուրիշ խօսքով, մանուկը իրա հոգու մէջ գտնուած զեռես անդիտակից մնացած բաները պէտք է միայն յիշէ, առաջ բերէ և զարգացնէ: Սրանից գուրսէ զալիս այն, որ առաջուց որոշած է, թէ մանուկը ինչ է լինելու: Այս կարծիքը շատ զարեր տեսց. եկաւ քրիստոնէութիւնը և կաթոլիկ հոգևորական դիտնականները, զարձեալ սրա նման էին բացատրում, միտին ուրիշ փատերի վրայ հիմուելով: Այսպէս, սրանք հաստատում էին, թէ աշխարհի մէջ գտնուած բոլոր բաները, նոյնպէս էլ մարդկանց կեանքի մէջ պատճաճ երեսովները, Աստուծոյ տնօրէնութեամբ առաջուց որոշուած են, – Աստուծած ամենակարող է, նրա որոշումներն անփոփոխ, արեմն, ոչ սի մարդու, ոչ մի աղայի չի կարելի մի նոր բան սովորեցնել, նրա մէջ փոփախութիւններ մացնել. նա անպատճառ պիտի զարգանայ նախասահմանուած ճակատագրի համաձայն: Չնայելով այսպէս քարոզում, հաւատում էին, բայց և այնպէս զործնական կեանքի մէջ իրանք էլ հակառակն էին տեսնում: Այս սխալ զաղա-

փարները հարիւրաւոր տարիներ մարդկանց միտրը կապեցին կապկապեցին մինչեւ որ սրանից մօտ 300 տարի առաջ անգլիացի զիտնական Լոկլ-ը զրանց անճշգութիւնը ցոյց տուեց և առօրեայ բազմաթիւ փորձերով ապացուցեց, որ մանուկը ծնուելու օրից սկսած մինչեւ մահը միշտ նոր բաներ է սովորում և միշտ նրա մէջ զանազան փոփոխութիւններ են առաջ գալիս: Այս զիտնականն էլ մի ուրիշ ծայրայեզրութեան մէջ ընկաւ: Սրա կարծիքով մանուկը ծնուելիս իրա հետ ոչ մի տրամադրութիւն չի բերում, այլ նրա հոգին բոլորովին դատարկ անգիր տախտակի է նմանուում և ծնուած բոպէից ինչ որ տեսնում, լուս, շօշափում, խօսում է, այդ ամենը նրա հոգու մէջ զբում, տպում է և օրէցօր, տարեց տարի շատանալով կազմում է նրա ամբողջ հոգու էութիւնը: Սրանից գուրս է զալիս, որ մանուկը իրա հետ ոչ մի հոգեկան տրամադրութիւն յատկութիւն աշխարհ չի բերում: Մանկան ծնողները, շրջապատող մարդկի, վարժապետները, որշափ բան ուզենան՝ նրա զլխի մէջ կըմացնեն, ինչ ուզենան կըսովորեցնեն, այնպէս որ՝ նրանց մեղքամոմի պէս ինչ ձեւ ուզենան կարող են տալ. այսպէս օրինակ, կարող են մանկան խելօք, լաւ մտածող, օգտակար, հանճար շինել, մի ուրիշին էլ անպէտք, ապուշ մարդ եալին:

Այս կարգի զիտնականներն էլ առաջինների նման սխալուցին գործնական կեանքի մէջ: Այսպէս, շատ նշանաւոր, աշխարհուշակ փիլիսոփաներ իրանց եպութ (ճիզութ) ուսուցիչների բոլոր ցանկութիւնների, երկար տարիների աշխատութեան հակառակ՝ բոլորովին ուրիշ ուզենան մարդկի գուրս եկան: Մենք շատ անզամ մեր տների մէջ տեսնում ենք, որ քոյլ ու եղբայրներ, անզամ երկողեակներ, չնայելով միևնոյն տան

մէջն են ապրում, միտասին մեծանում, զարգանում, մի-
նենոյն աղղեցութեան տակ առաջ զնում բայց և այնպէս
նրանց հոգու, բնաւորութեան ուղղութիւնը, բոլորովին
ուրիշ տեսակ է լինում: Միենան դասարանի բազմա-
թիւ աշակերտները հաւասար շափով նոյն առարկաներն
են սովորում, բայց և այնպէս նրանցից ամեն մէկը
սովորածը այլ կերպ է հասկանում, ըմբոնում, այլ
յատկութիւնների վրայ ուշք դարձնում և բոլորովին
տարբեր մարդ զառնում քան ընկերները: Երբեմ ծնող-
ները, խնամտկալները, դաստիարակները աշխատում են
մանկան բնաւորութեան մէջ զանուած այս կամ այն
շատ զօրեղ պակասութիւնը ոչնչացնել—ինչպէս օր.
յամնութիւնը, հպարտութիւնը, բայց և այնպէս, շատ
անգամ նրանց բոլոր ոյժը, աշխատանքը իզուը են կոր-
չում և այդ տղաների պակասութիւնը որպէս աչքի
ընկնող յատկութիւն՝ օրօրոցից սկսած մինչև գերեզման
մնում է: Այս և որա նման բազմաթիւ օրինակներից
պարզ երեսում է, որ մանկան մէջ երբ ժառանգական
այս կամ այն յատկութիւնը շատ զօրեղ է՝ անկարելի է
նրան բոլորովին ոչնչացնել: Խելացի դաստիարակու-
թիւնով, կանոնաւոր ընկերական շրջաններով, լաւ ըն-
կերներով կարելի է մեղմացնել, թուլացնել և անզզալի
զարձնել, բայց բոլորովին անհետացնել անկարելի է:
Իզուր չի ասում հայկական առածը թէ, «Կաթի հետ
մտածը, հոգու հետ դուրս կըդայ»:

Ստորին, առաջ չփնացած ցեղի մանուկների մէջ,
ժառանգական յատկութիւններն աւելի զօրեղ լինելով,
նրանց մէջ որեիցէ նոր և լաւ վոփոխութիւններ մըտ-
ցնել համարեա անկարելի է: Ներկայումս հաստատ կեր-
պով ապացուցած է բնածին ժառանգական յատկութիւն-
ները և մենք միենոյն ժամանակ կարող ենք այդ ոյժը

հասկանալ՝ երբ նրա առաջ գալը, զարգանալը, օգնող
պայմանները սովորենք: Ժառանգական այդ յատկու-
թիւնները մեր ծնողներից, պապերից, նրանց հայ-
րերից, մի խօսքով նախնիքներից ժառանգաբար ստա-
ցել ենք: Եթէ նոյն իսկ գիտնականների կատա-
րած փորձերը մի կողմ թողնենք, մեր մէջն էլ շատ
մնամ տեսնում, լսում և զատում ենք նոյն իսկ այն-
պիսի բաների մասին, որոնք ժառանգականութեան իրա-
կանութիւնը պարզ ապացուցանում են: Այսպէս օր.
մեղանում շատ տարածուած խօսակցութեան ձև է,
որ ասում են: «Այս տղան բոլորովին հօր նման է կամ
տեղուտեղը մայրն է». «Սա քեռուն է քաշել կամ եկել»,
«Սա ինքը կատարեալ պապն է»: Սրանք մի տեսակ խօ-
սակցութեան ոճ են դարձած՝ որոնցով ծնողների ու
տղաների նմանութիւնն են ցոյց տալիս: Ժառանգակա-
նութեան օրէնքը, նոյն կերպ երեսում է կենդանիների,
բոյսերի մէջ: Վերև ասածներիցս երեսում է, որ Պլատոն,
Լոկլ, և ուրիշները, իրանց քարոզած գաղափարներով
միտողմանի էին: Ժառանգականութեան օրէնքը հիմայ
շատ կողմերով պարզած, հաստատած է՝ որ կայ ընա-
ծին ժառանգական յատկութիւններ և ստացական յատ-
կութիւններ, որոնք դարձեալ ժառանգաբար անցնում
են սերնդէ սերունդ:

Այսպէս ուրեմն, մանուկների հետ գործ ունեցող-
ները, նրանց կրթող դաստիարակները, ուրեմն ընտա-
նիքի անդամները, խնամատարներն ու ուսուցիչները,
ոլարտաւոր են այդ օրէնքները շատ լաւ գիտենալ, որ
իրանց տղաների, աշակերտների առաջ, հանելուկի
նման զարմացած, կանգնած չմանան և հաստատ իմա-
նան, թէ մրտեղից սկսեն գործը, ուր զնան, ինչպիսի
միջոցներ գործ դնեն եալին: Ահա սրանով միայն հեշ-

տութեամբ երեխաների մէջ աշքի ընկնող այս կամ այն զօրեղ պակասութիւնները կամ առաւելութիւնները կարող են իմանալ: Այս ժամանակ միայն, գաստիարակների վարժունքը տղաների հետ տևելի արդարացի, խելացի կրլինի, իսկ ձեռք առած միջոցները տեղին, յարմար և ճիշդ նպատակի հասցնող:

Ժառանգականութեան օրէնքի այս մասը երկու խօսքով իմանալուց յետոյ՝ այժմ անցնենք մեր իսկական խնդրին:

II.

ՍՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՎՆԱՄՆԵՐԸ

Քանի, քանի անդամ մեզանից իւրաքանչյուրը ասած կամ լսած կրլինի, որ սուտ խօսելը վատ բան է, նա շատ չարիքների աղբիւր է, այդպիսի մարդկանց չեն սիրում, ընկերութիւնների մէջ չեն ընդունում, ամերին էլ զգուանքով են խօսում նրա վրա, ասածներին չեն հաւատում և միշտ կասկածով են վերաբերում:

Ուշափ ծնողներ, խնամակալներ, վարպետներ իրանց սանիկներին թագել, պատժել, մութ սենեակ ձգել, հացից, խազից զրկել են՝ սրովհետեւ նրանք սուտ են խօսել, իրանց զործին վնասել և ուրիշներին խայտառակել են: Հատերը, հէնց որ իրանց ստախօս ընկերին տեսնում են, իրար մէջ ծիծագելով ասում են. «Ահա ստախօսն եկաւ, նրան մեր ընկերութեան զաղոնքը չասենք և շատ երես շտանք, թող իր ճանապարհը շարունակէ: Զատ անդամ էլ պատահել և լաել ենք, որ չափազանց ստախօսին թքում, մըում են, անամօթ

անպատկառ անուններով կնքում են: Այս բաները ամենքիս էլ յայտնի են և շատ ու շատ այսպիսի բաղմաթիւ օրինակներ, դէպքեր գիտենք, այնպէս որ, չարժէ երկարացնել, այլ բաւականանանք մի քանի օրինակով:

Բայց ինչո՞ւ մարդիկ սուտ են խօսում, գուցէ հարցնէք, չի կարելի առանց սուտ ասելու ապրել: Կարելի է, կասեմ, բայց սուտ խօսելուց չեմ կարծում, թէ մի մարդ ազատուած լինի, ինչ էլ լինի, էլի նա երբեկցէ, նոյն իսկ մանկական հասակում սուտ խօսել է. և զիտէք ինչու, որովհետև մեր շրջապատող օդի, մեզ կեանք տուող շնչի հետ՝ կարծես դա ներս է գնում և մենք դրանով վարակում ու մանկական թոթով լեզուով բարբառելիս, չափազանցութիւնների, երևակայական գործերի և ստերի մէջ ենք ընկնում: Մեր մէջ գոնուած այդ պակասաւոր հակումը, ծնած օրերից հետներս ենք բերում. նա ժառանգական է, հետեապէս անխուսափելի. ուրեմն մանուկը ուզէ չուզէ, պէտք է զըա մէջն ընկնի: Մանուկը օրերով, ամիսներով, տարիներով շարունակ տեսնում լսում է մօր, քոյր ու եղբայրների, ծառաների, աղախնու և ամերի բերանից ստախօսութեան դէպքեր, օրինակներ: «Երեխայ է խելքը չի կըտրում» ասելով բաւականանում են և խեղճ մանուկների զլուխը շատ ու շատ այսպիսի բաներով լցնում են. այսպէս դեռ մանուկ հասակում չորս կողմից ստախօսութեան օրինակներ ձեռք է բերում: Ուրեմն իծնէ ժառանգականութիւնը մէկ կողմից, ստացականը միւս կողմից: Բայց չէ որ մանուկն անմեղ արարած է, հարցնում էք զուք. ճշմարիտ է, թէկ նա ընկնում է ստախօսութեան մէջ, բայց նրա զործած յանցանքը նպատակով չէ, դեռ շահի, ուրիշներին վնասելու, օգտի համար չէ. դա միմիայն անմեղ, մանկական ժառանգական գործ է

որի վրայ եթէ օր առաջ ուշը շգարձնենք, բաց աչքերով շհետևենք՝ քանի գնայ կըմեծանայ և մի օր էլի բան անդնդի մէջ կը գրոք: Մանկան հոգին, ընթերցող, ամեն բանի համար բաց է, ինչպէս լաւի, նոյնպէս վատի: Եթէ տղան լաւ ծնողի կանոնաւոր զաստիարակի ձեռքի տակով չանցնի, այն ժամանակ երկու տեսակ յատկութիւնն էլ նրա մէջ կ'աճեն, կըզարդանան և այն ժամանակ պակասութիւնների առաջն առնելը, յետոյ շատ դժուար կըլինի:

Ում յայտնի չէ, երբ ընկերների, բարեկամների, ազգականների, քոյր ու եղբայրների, նոյն խալ հօր և մօր մէջ ստախօսութիւն է առաջ գալիս և երբայդ մի քանի անգամ կըկնւում է, նրանք իրարուց սառչում, մէկ մէկու չեն հաւատում և վերջը իրարուց կտրուելով՝ անտարբեր են դառնում, որպէս թէ բռլորավին օտարներ լինէին:

Դեռ այս բաւական չէ, շատ անգամ «տեղն է, շատ լաւ եղաւ, իր ստախօսութիւնն պատիմն է» և այլ այսպիսի խօսքերով, իրանց սրտի ցաւը հանգտացնում են. ուրեմն սուտը մօտ սրտեր, մօտիկ մարդկանց իրարուց բաժանում է: Հօ շատ անգամ տեսել ենք, որ ստի շնորհիւ հոգով, սրտով, ամենամօտիկ մարդկանց մէջ էլ երկպառակութիւն է առաջ գալիս և նրանց մտաւոր գաղափարական կապերը թուլանալով, արհետական, ձևական դառնում:

Նոյն ստախօսութիւն շնորհիւ է, որ մարդիկ իրանց սրտի, գլխի մէջ չունենաւով այն, ինչոք լեզուի վրայ, խօսքով ունին, ամերի առաջ բռլորովին ուրիշ կերպ են ձեանում, օձի նման սոզում, աղուէսի պէս ամեն կերպ ձկում, խօսքերով, զէմքի շարժումներով աշխատում են մարդկանց դուր գալ, կեղծիքներ, խարդախութիւններ

և ամեն տեսակ միջոցներ գործ դնում, որ իրանց ասածը հաստատ են, հաւատացնեն: Այսպիսի ճանապարհներով նրանք իրանց գրութիւնը լաւացնելով՝ ուրիշներին գժուարութեան, նեղութեան և խայտառակ գրութեան մէջ են ձգում: Յայտնի է նոյնպէս, որ սուտ վկայութեան ժամանակ անմեղները իզուր տեղը մեղաւոր են ճանաշւում և ընդհակառակը մեղաւորները անմեղ: Նոյնալիս փուչ, ստոր կեղծաւորը վստահելի դառնում և մարդկանց գլխին պատիժ լինում: Սրա հակառակ խելօք, օգտակար, պատուաւոր մարդկանց՝ ամեն տեսակ նեղ գրութեան մէջ շպրտում և այլ այսպիսի շատ ու շատ պակասութիւններ, որոնց մասին ձեղանից ամեն մէկն էլ կեանքի մէջ տեսել, լսել կամ կարգացել է: Մի խօսքով ստախօսութիւնից ամենայն հեշտութեամբ առաջ է գալիս կեղծիք, կեղծաւորութիւն, ստորովին, խավերայութիւն, թշուառութիւն, անզժութիւն, երկպառակութիւն, մարդասպանութիւն, անբարոյականութիւն և առհասարակ մարդկանց բաւ ապրելու, բարեկեցութեան թշնամի:

Այժմ հարց է առաջ գալիս. ինչացու են այդպիսի մարդիկ, երբ նրանց ամեն մի քայլը թունաւոր և մահաբեր է ընդհանրութեան համար: Մեզ ուրիշ բան չի մնում անել, եթէ ոչ ամեն կերպ աշխատել, զինուել, կուուել և հիմքից ոչնչացնել այդ պակասութիւնները. իսկ այդ միջոցներն ու զէնքերը մեզ կըտայ մանկավարժական զիտութիւնը, զրանով միայն հնարաւոր կըլինի ճշմարտութիւնը պաշտպանել: Այնինչ ճշմարտութիւնը, ուղիղ, շիտակ ասելը, ամեն տեղ, ամեն ժամանակ ամեն զործի մէջ պէտք է առաջին տեղը բռնէ և բոլոր լաւ, բարի, աղնիւ, օգտակար, զուրեկան, առաքինի բաների հիմքն, այդտեղից սկսուի, աճի, առաջ գնայ և

մարդկանց բարձրացնում, յառաջ տանում:

Երիտասարդ սերնդի, մասուկ հասակի մէջ ոչ մի պակասութիւն այնշափ տարածուած չէ, որչափ ստախօսութիւնը: Սրա աղբիւը համարւում է գլխաւորապէս երկու. I ժառանգական, II ստացական, որոնց մասին արժէ մի փոքր կանդ առնել:

III.

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԱԳԱՅԱԾԱԾ ՍՑԱ- ԽՈՍՈՒԹԻՒՆ

«Միթէ մարդ իր տղին վատ է ուզում. հաւը, ստուր, բաղը չնայելով որ թռչուններ են, էլի իրանց ձագերին լաւ են ցանկանում և ամեն կերպ աշխատում են անվնաս, առանց գժուարութեան մեծացնել»: Ալպիսի խօսքերը շարունակ լսում ենք ժողովրդի մէջ այն ժամանակ, երբ մեղադրում են, թէ իրանք են մեղադր որդիների վատութեան, չարութեան, ստախօսութեան և այլ պակասութիւնների մէջ: Նրանք թռչունների, կենդանիների հետ համեմատում են, հիմնուելով այն բանի վրայ, թէ մարդը այդ բոլորից խելօք լինելով, իր որդիներին իհարկէ միշտ էլ լաւը, բարին օգտակարը կուղենայ անել: Ճշմարիտ է, ոչ մի կենդանի արարած շրկայ աշխարհի վրայ, որ իր զաւակներին լաւ չցանկանայ, չօգնէ, չպաշտպանէ. չնայելով դրան, շատ անվամ խեղճերը, հէնց նոյն իսկ լաւութիւն անելու համար, առանց հասկանալու, նրանց տեսակ տեսակ պակասութիւնների մէջ ձգութ, վտրժեցնում են, և ամենք հա-

մար վնասակար դարձնում: Ջատ հեռուն չգնալու համար, վերադառնամ ստախօսութեան հարցին և տեսնենք թէ ինչպէս է առաջ դալիս, մեծանում, զարգանում և վնասակար դառնում:

Մի փոքր վերեռում ասացի, թէ ստախօսութիւնը ժառանգական է. տղան իրա հետ աշխարհ է բերում և օրօրցից սկսած հետդիետէ շատանում, միծանում է: Երբ չորս կողմի կեսանիքից նոր-նոր օրինակներ տեսնում, լսում և շարունակ կրկնում է՝ ահա այդ ժամանակ յանցանիքը քանի զնում միծանում անմեղ ստախօսութիւնը յետին մտքերով և ուրիշին խարելու նպատակով է զառնում. այսպիսով առաջ է դալիս փոքրիկ ստախօսներ, որոնք օրէցօր մեծ մեծ պակասութիւնների մէջ են ընկնում, ուրիշներին վնասում և մի օր նոյն խարերանները, վնասակար մարդիկ դառնում, որոնց մասին մենք արդէն իմացանք: Ժառանգական ստախօսութիւնը այնշափ տարածուած և սովորական բան է, որ մեզանից իւրաքանչիւը այդ կարող է նկատել, միայն բանի տեղ չդնելով՝ անուշագիր է թողնում: Ժառանգական ստախօսութեան տեսակներն են:

Ա. Բնազրական—Այսպէս օր. մի մայր 18 ամսական երեխային փոքրիկ կառքով այգում ման էր ածում. յանկարծ տղան մօտը զրած ձեռնոցը դէն է ձգում. մայրը այս նկատելով, վեր է առնում, կառքի մէջ զնում պատուիրելով, որ էլ վայր չձգէ: Քիչ ժամանակից յետոյ, փոքրիկ խորամանկը մօր ուշագրութիւնը ուրիշ կողմ դարձնելու համար առում է. «Ճես, տես մայրիկ, շունը». Երբ մայրը այն կողմն է նայում, աղջիկը նորից ձեռնոցը վայր է ձգում: Երկու ամիս յետոյ, նոյն աղջիկը իր թէյի բաժակը կոտրում է; Երբ մայրը նրան մօտենում է, փոքրիկն ինքն իրան ասում է. «Մայ-

բիկը կոտրեց, պիտի պատժել նրան.» ասում է և փոքրիկ ձեռքերով մօրը խփում է: Մի նշանաւոր մանկական հոգեբան ասում է: Երեսուն ամսական մանկան հետ խաղալիս, նպատակով խաղի մէջ գտնուած բանալին վայր ձգեցի. փոքրիկ խաղընկերս իսկոյն վեր առաւ բանալին, պահեց յետեր և երբ հարցնում եմ. որտեղ է բանալին, պատասխանում է. «Ել այստեղ չկայ»: Այս և սրանց նման դէպքերում չէ կարելի ասել, թէ փոքրիկ-ները խարելու նպատակով են անում, այլ դա ինքն իրան բնազդաբար առաջ եկած վարմունք է, որոնց մէջ մասամբ խորամանկութիւն, գուարճալի համաք կայ: Չնայելով դրանց, բայց և այնպէս կարող ենք ասել, որ դրանցից պարզ երեսում է, թէ խարելու մի փոքրիկ սաղմ կայ նրանց մէջ, որի պատճառով անդիտակից կերպով այս կամ այն իրը թաղցնում են, կամ իրանց բաւականութեան համար սուտ են ասում:

Բ. Երեւակայութիւնից առաջացած ստախօսութիւն. Մանուկների ստախօսութեան ամենանշանաւոր և անմեղ տեսակի պատճառը համարում է նրանց վառ երեակայութիւնը. իսկ այս բանը ամեն մանկան մէջ որոշ չափով կայ: Այս տեսակ ստախօսութիւնը ինքն իրան մանկան կազմութեան հետ առաջ է զալիս՝ առանց սուտ ասելու նպատակով. սրա համար, այս տեսակ ստախօսութեանը ուրիշ կերպ ասում են «լոռօքերի սուտ»: Այս առթիւ մի շատ նշանաւոր փիլիսոփայ տեղին ու յարմար նկատում է. «Մեր երեխաները իրանց առաջին հինգ տարում ոչ մի սուտ, ինչպէս ոչ մի ուղիղ խօսք չեն ասում, այլ նրանք միմիայն խօսում են: Նրանց խօսակցութիւնը բարձրաձայն մտածողութիւն է, բայց որովհետեւ շատ անզամ նրանց մտածողութեան կէս մասը այն, իսկ միւս կէսը ոչ է, դրա համար էլ այն-

պէս է թւում, թէ նրանք սուտ կը առաջ այն ինչ միմիայն իրանք իրանց համար խօսում են. վերջապէս նրանք սիրով խաղում են իրանց խօսելու նոր արհեստով, հէնց դրա համար էլ շատ անզամ անմիտ կերպով խօսում են, որպէսզի իրանց սեփհական լեզուագիտութիւնը լսեն:»

Ոտքը երկու տարու մէջ դրած չդրած՝ մանկան երեակայութիւնը աւելի զօրեղ է գործում թէ շնչաւոր և թէ անշունչ առարկաների հետ: Այսպէս օր. ով չէ տեսել, երբ երեխաները իրար հետ խնամի են խաղում, հարսանիք սարքում, ուտում, խմում են դատարկ աման-ներից կամ փոքրիկ փայտերի կտորներից. սրանով նրանք միշտ երեակայում են, թէ բան են ուտում: Մեզանից ամեն մէկը տեսել է, որ փոքրիկ աղջիկը խաղատիկինը գրկած, նրան կենդանի մանկան տեղ է ընդունում, իսկ եթէ այս էլ չլինի՝ մի կտոր քարն էլ նրան բաւական է: Տեսնում էք ինչպէս խնամքով հագցնում, կապում, շորերով զարդարում է, հետը խաղում և յետոյ երգելով քուն դնում: Իսկ երբ երկու աղջիկ իրար պատճառում են, նրանք իրանց խաղատիկիններին հրաւիրում, պատըում են, մէկ մէկու տուն տանում և խնամի խաղացնում: Փորձեցէք սուսիկ փուսիկ մօտենալ, այն ժամանակ պարզ կերպով կը տեսնէք նրանց սրտանց ուրախութիւնը, գուարճութիւնը, տրտմութիւնը. կը տեսնէք, թէ ինչպէս իրանց երեակայական կենդանի ընկերների հետ խօսում, պատասխանում են: Ինձ պատճառ են այնպիսի աղջիներ, որոնք ոչ թէ միայն փոքր հասակում իրանց խաղալիքների հետ կտպուել, զուարճացել, նրանց հետ ապրել են, այլ և տարէց տարի իրանց խաղընկեր տիկինների ընտանիքը բազմացրել, նոր նոր անուններով նրանց թիւը շատա-

յըրել, ամեն մէկին զանազան պաշտօններ տուել և նրանց հասակն էլ դրա հետ մեծացրել, լնտանիքի մէջ նրանց դիրքը փոխել և այն. մի խօսքով նրանք իրանց սիրած, երեակայական ընկերներից մինչև 10, 12, 14 տարեկան հասակում դեռ չեն ուզեցել բաժանուել - թէն այժմ իրանք էլ խոստովանուում են, որ սուտ է, իսկութիւն չէ, բայց և այնպէս շատ դժուար է մանկական յիշողութեան այդ երեակայութեան հաճելի ընկերներից բաժանուել: Իսկ ապա շարաճճի տղաները, ահա նրանցից մէկը փայտը ոտքերի արանքները դնելով՝ ձի է երեակայում և ոյժը կտրածի չափ վազելով դէս ու գէն, բաւականութիւն է ստանում, յօգնած ձիուն հանգստացնում, շփում, կերակուր տալիս և խնամքով պահում է: Աւելի փոքրերը բարձը ձի երեակայելով, նրոտում, շարժում են և նոյն բաւականութիւնը ստանում: Այսպէս էլ մանուկները որևէ անշունչ առարկայի ընդունում են թոշնի տեղ, նրան խնամում, ուշը դարձնում և սաստիկ բարկանում, լալիս են, երբ դուք նրանց մօտից անցնում էք: Նրանք կարծում են, թէ թոշունը վախենալով կարող է թոշել, վախչել: Մի փոքրիկ, առաջը դրած ապուրը արագ արագ ուտում էր միայն նրա համար, որպէսզի ափսէի վրայ նկարած աքաղաղը չխեղուի և բաւականութեամբ նայում էր նրա գլխին, ոտներին, պոշին ու ժպտալով ցոյց էր տալիս ծնողներին թէ նա երեսում է, խեղուած չէ: Երբեմն էլ տղաները աթոռները իրար մօտ դասաւորելով կառք են պատրաստում, առաջին աթոռները ձի երեակայում, իրանք էլ վերան նստած շարժում են՝ կարծելով թէ գնում են: Մի խօսքով, ով փոքրիկների խաղին հետեւ, դիտել է, նա շատ ու շատ այսպիսի երեակայական խաղեր, օրինակներ տեսած կըլինի: Դեռ այս բաւա-

կան չէ, շատ անգամ մանուկների երեակայութիւնը այնչափ վառ է լինում, որ նրանք իրանց երեակայած բաները, երազում տեսածները՝ կարծում են թէ խսկապէս եղած են և նրա համաձայն էլ պատմում, խօսում, վիճում են: Այսպէս օրինակ, մի փիլիսոփայ բժիշկ պատմում է, որ ինքը մինչև 4 տարեկան հասակը իրա երեակայական բաները կամ երազում տեսածները, խսկական դէպքերի տեղ է դնում. այսինքն նա կարծում էր, թէ այդպէս կատարուել է և ինքն է տեսել կամ հետները զործել. դրա համար ծնողների և սրա մէջ տաք տաք վէճեր էր ծագում: Տղան հաստատում էր, թէ այս ինչ մարդը իր մօտ այցելութեան է եկել, այն ինչ առարկան իրան զուր է եկել, իսկ ծնողները հակառակում էին: Ինձ պատահել են տղաներ, որոնք սկզբներում երազի և խսկական կատարուած զործերը իրարուց չէին կարող զանազանել: Մայրը շորերը հաղցնելիս, մանուկը թողովելով պատմում էր, թէ սրա հետ խաղացի, նրա հետ կոռւեցի, նա վատ տղայ է, ինձ ծեծեց, այն ինչը կարմիր խնձոր տուեց և այն: Այսպիսիները երբ մի փոքր խելահաս են դառնում, մտածում, դատում են՝ նոր են հասկանում երազի և իրականի զանազանութիւնը: Կան տղաներ էլ, մանաւանդ զուարթ, աշխոյժ, արիւնային խառնուածք (սանգուինիկ տեմպերամենտ) ունեցողները իրանց վառ երեակայութեան խաղի շնորհիւ որեիցէ դէպք այնպէս մեծացնում, զարդարում, գեղեցկացնում կամ սարսափելի են դարձնում, որ բոլորովին այդպէս չէ: Այսպէս օրինակ, մի երկու մարդու մէջ պատահած փոքրիկ կոփւը տեսնելիս, նրանք տանը այնպիսի գոյներով են պատմում, որ լսողը կարծում է, թէ այնտեղ ահազին բազմութիւն է եղել, մարդիկ իրար արթնլուփիկ արել,

սըերով մէկ մէկու վիրաւորել, մարդիկ են մեռել և այլն: Այսպէս էլ մի աղքատի շատ խղճալի դոյներով նկարագրում, դուր եկած խաղալիքների մասին զարմանալի բաներ պատմում: Երբեմն էլ պատմելիս դէպքերը, կարդացածը, լսածը մէկ մէկու են խառնում, զանազան ժամանակներում կատարուածը իրար հետ կապում և զուարթ պատմում են, որոնք խկապէս այդպէս չեն: Այսպէս էլ շատ անգամ ընկերների խաղի մեծ մասը իրանց են վերագրում: Այս բոլորը երեխան անզգալի կերպով է անում և ոչ թէ ստի, խաբելու նպատակով. այս բանը կարելի է միմիայն մոլորութիւն համարել:

Փոքրահասակները իրանց ասածի, պատմածի սահմանը շորոշելով, տարւում են վառ շարժուն երեակայութիւնով և կարծում են թէ ասածները ճիշդ են: Միթէ այսպէս չէ պատահում նոյն իսկ հասակաւորների հետ, եղելութիւնը ճիշդ պատմելու համար անհրաժեշտ է ընատրութեան որոշ հաստատութիւն եւ կամքի ոյժ: Մանուկների մէջ այս բանը գեռ շատ թոյլ լինելով, չեն կարող նոյն իսկ խակալան եղածը պատմել. մի հանգամանք էլ երեխայի ստախօսութեան համար այն է, որ նա լեզուն դեռ լսու չի կարող տիրապետել և ակամայ սխալների մէջ է ընկնում:

Այս ամենից յետոյ պիտի միանանք այն նշանաւոր մանկավարժների և գիտնականների հետ, որոնք մանուկների կեանքը հէքիաթական են համարում. այնտեղ տիրում է վառ երեակայութիւն, ինքնախարէութիւն, իրան պաշտպանելու համար զանազան ծայրայեղութիւններ, մոլորութիւններ և այլն: Չորս տարեկան մի աղջիկ ամեն անգամ հազում և իրան հիւանդ էր երեակայում, երբ տեսնում էր, իր փոքրիկ հիւանդ եղբօրը հազի քաղցը դեղ են տալիս: Այսպէս կըկնում էր միշտ,

երբ դեղի փոքրիկ շիշը տեսնում էր: Աղջկայ սաստիկ ցանկութիւնը դէպի քաղցը բաները, նրա հետ կապուած հազը շիշը տեսնելիս այնպէս զօրեղ կերպով էր առաջ զալիս, որ նա ինքնախարէութեան մէջ ընկնելով, իրան հիւանդ էր երեակայում և նրա հետ հազ ու խղճալի դէմքի արտայայտութիւն էր առաջ զալիս:

Փոքրիկ տղան ծնողների հետ ճանապարհ գնալիս, մէկ էլ տեսնես փողոցում կանգնում և ասում էր. «Օ՛ոսս ցաւում է, այ, այ այստեղ, էլ չեմ կարող գնալ»: Այստեղ թերես կայ մասամբ յոզնածութիւն, բայց նա յոզնածութիւնը իր երեակայութեամբ այնպէս զօրեղ և կինդանի կերպով է ներկայացնում՝ որ խկապէս ոտքերի ցաւ կարող էր զգալ:

«Մայրիկ, տեսա՞ր ինչպէս դուքանում մեխը ուժեղ կերպով տախտակին խփեցի». երբ մայրը զարմացած ոչ է ասում, տղան ձայնն աւելի բարձրացնելով յայտնում է: «2Է որ շատ ուժով խփեցի, այնպէս ձայներ էի հանում որ....» Այստեղ էլ նա երեակայում է, թէ իր խփելու ձայնը պէտք է որ հասնէր մօր ականջը և ամեն տեղ լսուէր:

Փոքրիկ Ռուբէնը շատ էր ցանկանում հարեանի տունը գնալ, նրան շատ էին սիրում և ամեն տեսակ փայփայանքներով պահում էին. երբ Ռուբէնը ստիպուած էր իրանց տանը մնալ, մէկ էլ յանկարծ վեր էր ցատկում և ուրախ կերպով մօրն ասում—«Ազին (հարեանի կինը) կանչում է» իհարկէ ոչ ոք չէր կանչում, միայն ապօւ հետ կապուած զուրեկանութիւնը յեշելով, իսկոյն երեակայում էր, թէ իսկապէս իրան կանչում են, որի համար մօրը հարցնելն ու զուրս թռչելը մէկ էր լինում:

Մանուկների հէքիաթական կեանքը երբեմն նոյն իսկ

շարունակում է պատճենելական հասակում։ Այսպէս, զպըց յաճախող մի քանի աղջկների վրայ նկատել եմ, որ նըանք ամենայն սիրով ճաշելուց յետոյ առանձնանում են, փայտիկները կամ կարտի պատկերները աշակերաների տեղ առաջները շարելով, գաս են տալիս, երգել սովորեցնում, թուանշաններ նշանակում, գոփում, պախարակում և այնչափ բարձր բարձր խօսում, բղաւում՝ որ ծնողները իմանալով արգելում են։ Պատահում են աղջկներ, որոնք ամուսնանալիս չեն կարող իրանց մանկական երեակայտական խաղընկեր տիկիններից բաժանուել և հետները օժիտ են տանում։ Մանուկների վառ երեակայութիւնը չափազանցութիւնների մէջ չը ձգելու համար, անհրաժեշտ է նրանց զբաղեցնել խելօք, ընտրովի կանոնաւոր հէքիաթներով, պատմուածքներով, ընթերցանութեան նիւթերով, առակներով և այլն։ Այս ընտրութեան շնորհիւ միայն կարող է մանկան վառ երեակայութիւնը կենդանի և պազաբեր լինել. հակառակ դէպքում կարող է նրա երեակայութիւնը շատ զօրեղ կերպով վառուել, ծայրացեզութիւնների մէջ ձգել վախ, երկիւղ, նախաստաշարմունքներ նրա մէջ մտցնել և փոխանակ օգափ, վիասակար լինել։ Պատահում են ծնողներ, որոնք իրանց որդու ժառանգութիւնից բրդիսած անմեղ չափազանցութիւնները, ստերը ուղղելու համար, խիստ բարբարոսական միջոցների, պատժի են դիմում։ իհարկէ սա շատ սխալ վարմունք է, այլ պէտք է համբերութիւն ունենալ, ասածները տեղնուածեղը հանգիստ կերպով աշխատել, ուղիղ, կըկնել տալ և սովորեցնել։ Բերեմ մի քանի օրինակներ։

—Մայրիկ, այսօր մեր զասարանի բոլոր աշակերտուհներն ուշացել էին զասից, ասում է աղջիկը, զըպոցից վերաբառնալով։

«Ամբողջ զասարանը հա. ուրեմն նշանակում է ուսուցիչը ամենից առաջ էր մտել զասարան և ժամը 8-ին բացի քեզանից ոչ մի աշակերտուհի չկար այնտեղ»։

—Ա՛խ, ոչ մայրիկ, այնտեղ աղջկներ կային, բայց շատ շատերը, երկի կէսը ուշ եկան։—

«Տեսնում ես աղջիկս, ասում է մայրը, մարդ խօսելու ժամանակ պիտի մտածէ և զգուշ լինի»։

«Եթէ ես քեզ հարց ու փորձ չանէի, պիտի սխալ հասկանայի, թէ ձեր զասարանցիք բոլորը ուշացել են։ Խսկ եթէ յանկարծ պատահէր մեր տիկին Կատարինէն և ասէի, թէ այսօր ձեր աղջիկն ուշացել էր զըպոցից և նա ինձ պատասխանէր, թէ այդպէս չէ, քանի որ ինքս ճիշդ իր ժամանակին գործով գնացել էի զըպոց և աղջիկս էլ հետո էր...»

—Հիմայ քեզ եմ հարցնում, ինչ պիտի սրանից գուրս գար. չէ որ մեզանից մէկը ճշմարիտ չէր։ Մի ուրիշ օրինակ,

«Հայրիկ, այսօր վողոցով հանդիսաւոր կերպով մեռել էին տանում. հետը այնքան կառքեր էին գընում, որ ամենաքիչը հարիւր հատ կըլինէր»։

—Սպասիր, ասաց հայրը, որպէսզի շմոլորուես, աւելի լաւ է միասին հաշուենք, արդեօք այդշափ կառք կը լինէր։ Մի կառքը, ձիերը և մինչև միւս կառքը, եթէ քսան ոտնաշափ հաշուենք, այն ժամանակ 100 կառքը 2000 ոտնաշափ տեղ կը բռնէր, իսկ այսափ տարածութիւնը 10 ըուպէի ճանապարհ կը լինի. ուրեմն, եթէ այդպէս հաշուենք, նշանակում է կառքերը պէտք է այսինչ փողոցից մինչև մայր եկեղեցին հասնէր։ Հիմայ քեզ եմ հարցնում. կառքերը այդշափ տեղ բռնէլ էին։—

«Ո՛չ, այդշափ երկար չէր»-

— Գուցէ դրա կէս տարածութիւնը լինէր, այսինքն մինչեւ ուսումնարանը.

«Ո՛չ, հայրիկ, այդշափ էլ չէր».

— Տեսնում ես Գուրզէնիկս, որշափ հեշտութեամբ մարդ կարող է խարուել, դու կարծում էիր թէ ամենաքիշը 100 կառք կըլինի, այնինչ իսկապէս 30 հազիւ լինէր:

— Ես հաւատացած եմ, որ դու ինձ սուտ բան չես ասէ, բայց եթէ այդ կերպ մի օտարին ասես, նա կը մտածէ, թէ դու ուղեցել ես նրան սխալեցնել: —

«Դասդ արտագրել ես, որ գուրս ես եկել, հարցնում է քոյլը եղբօրից».

— Այն, պատասխանում է եղբայրը.

Քոյլը տեսնելով, որ արտագրած չէ, ասու մէ. — դու մոռացել ես, նստիր և զրիք, պէտք է վազուայ զործը միշտ պատրաստ լինի, թէ չէ ընկերներիդ, ուսուցչիդ մօտ ամօթով կըլինես:

Այսպէս էլ տեղի ու տեղը պէտք է ուղղել, անել տալ, երբ տղան հէքիաթը, պատմութիւնը, դասը շը զիտէ: Կարդացածը երբ չափազանցրած է պատմում, իսկոյն ցոյց տալ, որ այդպէս չէ, նորից կարդացնել. կամ թէ երբ ուրիշից լսածը պատմում է այնպէս, կարծես թէ ինքն էլ ներկայ է եղել՝ իսկոյն պէտք է այդ մեղմ կերպով յիշեցնել, ուղղել, և նորից կըկնել տալ. նոյնպէս յարմարէ որեէ բան տեղն ու տեղը նկարագրել, կարդալ, պատմել տալ և երբ նա չափազանցութիւնների մէջ ընկնի՝ իսկոյն յիշեցնել, ցոյց տալ, որ այդպէս չէ, այլ այսպէս է և սրանով հետզհետէ սովորեցնել իսկութեանը: Այդ բոլորի հետ յանդիմանութիւն, ծեծ, պատիմներ, երկար ու բարակ քարոզներ չպիտի լինի. այլ միշտ հանգիստ, համբերող, ուշա-

զիր վարմունք է պէտք և սխալն ու պակասութիւնը տեղնուտեղը ուղղել. այնպէս որ, մանուկն անզգալի կերպով, առանց քաշուելու, կարմրելու ինքն իրան ուղիղ ճանապարհի գայ: Նոյնպէս մեծ նշանակութիւն ունի, թէ մանկանը ինչպիսի հէքիաթներով, փոքրիկ գեղեցիկ պատմութիւններով են զբաղեցնում: Թէ ինչպէս պէտք է այս ամենը տանել, այս մասին մի ուրիշ անգամ:

Աւելի ուշը է զարձնելու նպատակով ստեր հնարող և սուտ խօսող երեխաների վրայ: Այստեղ ևս պէտք է աշխատել նոյն կերպ տեղնուտեղը ուղղել, վերջացնել, ապա թէ ոչ նրանք իրանց արածներից քաջալերուելով, կ'աշխատեն աւելի ու աւելի նոր նոր միջոցների գիմել և ժամանակի ընթացքում խոշոր պակասութիւնների մէջ ընկնել: Այս բոլորից յետոյ, անշուշտ ամենքս էլ պիտի դանք այն եղբակացութեանը, որ իսկապէս մանուկների սկզբնական կրթութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի, թէ առաջնորդը, ուսուցիչը, ծնողը, ուշափ զգուշութիւն, նուրբ հոտառութիւն, հմտութիւն և պատրաստութիւն պիտի ունենալ: Ուրեմն սխալ է այն մարդկանց կարծիքը, որոնք փոքրիկների սկըզբնական կրթութիւնը յանձնում են տգէտ, գործից չհասկացող մարդկանց — ինչ է արժանէ և մանուկն էլ զրել կարգալ նոր է սկսում:

9. Պարծենկոտութիւնից առաջացած ստախօսութիւն. Մէկ էլ տեսնէր, 3—4 տարեկան փոքրիկ տղան ինքն իրան ուղղելով, գլուխը բարձրացնում, դէմքին լըջութիւն է տալիս և հպարտ հպարտ ասում է. «Ճես մայրիկ, ես որշափ մեծ եմ, շուտով աւելի կըբարձրանամ. այ, այ այս գուան, այս պատի շափ.» ասում ու փոքրիկ ձեռքը մեկնելով պատն է ցոյց տալիս: Կամ որևէ

բարձր տեղ կանգնելով՝ պարծենալով ասում է. «Տես,
տես, ես որչափ մեծ եմ»: Եթէ մէկը նկատէ թէ
այդափ մեծ չես, այլ փոքր ես, նա վիրաւորւում և
նեղանալով հեռանում է: Փոքրիկ աղջիկը կամ տղան,
մօտենալով մօտիկներից մէկին, ձեռները փակելով
ասում է. «Կարող ես ձեռքս բանալ». փոքրեցէք թոյլ վե-
րաբերուել և ցոյց տուէք, թէ չէք կարող բանալ. «Տե-
սար, տեսար, չես կարող», կրկնում է հայրատանալով—
«ես այնչափ ուժով եմ որ...»: Այս բանից քաջալերուե-
լով ինքն է առաջարկում. «Ապա դու խփիր, ես բա-
նամ»: Այսուեղ պակաս հետաքրքիր չէ նրա թափած ճի-
զը, նա արին քրտինք է մտնում և ամեն կերպ աշխա-
տում է բանալ. իսկ եթէ թոյլ թողնէք բանալու, նոյն
ձեռվ պարծենալով ասում է. «Տեսար, ես քեզանից
ուժով եմ»: Մօտեցէք նոյն հասակի աղջկան, նա բուրդը
ձեռքին մանում է և քեզ խոստանում է ամեն տեսակ
լաւ բաներ պատրաստել, կամ թէ ասեղը ցոյց տալով
յայտնում է, որ ինքը խաղատիկինի, հօրաքրոջ, մօրա-
քրոջ, համար շոր է կարում, բարձ է պատրաստում և
այլն:— Ռուբէն ջան, տես պտուղները ներս բերել են.—
«Այս հայրիկ, բոլորը բերեցի». վրայ է բերում փոք-
րիկ տղան.

Մի բանի օրից յետոյ նոյն տղան հօրեղբօր գաւա-
կը նստած գնում է ուխտ. երբ այնտեղ հօրը տեսնում
է հայրատանալով յայտնում է. «Տեսար հայրիկ, ամուն
բերեցի»:

Մանուկների մէջ առաջ եկած այսպիսի պակասու-
թիւնները թէն ստախօսութեան չեն տանում բայց և
այնպէս նրա առաջ զնալուն, զարգանալուն կարող են
նպաստել՝ եթէ առաջուց խելացի վարմունքով առաջը
շառնեն և տեղնուտեղը հանգիստ կերպով, հանաքի

ձեռվ ցոյց չտանց նրանց սխալ:

Դ. Ուրիշներին դուք գալու ցանկութիւնից տռաչ եկած
ստախօսութիւն: Մանուկների ուզիղ շխոսելու զլխաւոր
աղբիւրներից մէկն էլ այս է համարւում. մանաւանդ
այդ յատկութիւնը աւելի զօրեղ աշքի է ընկնում աղ-
ջիների մէջ: Տեսնում էք փոքրիկ աղջիկը, տղան, մօ-
րը, հօրը, բրոջը կամ մի ուրիշին, սիրով լիքը խօսքե-
րով, ձեռքերի, գէմքի, աշքերի գուրեկան շարժումնե-
րով՝ վախթամթուում և տառմ է. «Օ՞չ հայրիկ ջան, որ-
շափ ես քեզ սիրում եմ, որքան լաւն ես դու»:

— Ի՞նձ էլ սիրմաւմ ես, հարցնում է քոյրը,

«Այս, այս քեզ էլ շատ սիրում եմ»:

Ո՞րշափ հարցնում է մայրը.

«Այս այսչափ» ասում է փոքրիկ սատանան և աշխա-
տում է թևերը որչափ հնարաւոր է լայն բանալ: Կամ
թէ չէ յանկարծ հօր զերկը զլորուելով, պաշում պա-
շում, թոթովելով պատում է.

— Հայրիկ ջան, ինչպիսի գեղեցիկ աշքեք ունիս, քո
կառնիկը քեզ շատ է սիրում» և այլ սրանց նման սիրա-
բատիկներ անելով՝ ուզում է ամերին գուր զալ, որ իրան
շոյեն, փաղաքշեն, քաղցրաւնիք տան և միւսներից
աւելի սիրեն:

«Ասենք թէ ես քո քոյրն եմ, քեռի ջան, ասում է
փոքրիկ աղջիկը, թող ես վերադ ծածկեմ, որ չը
մըսես». ասելին ու վերմակը վերև քաշելը չէկ է անում:
Հէնց այս բաների մէջ զտնուում է երեխաների ժաւան-
գական, զուր զալու ձգտումը, որն ոչ այլ ինչէ, և թէ
ոչ մանկական հասակում կեղծիրի, խորամանկութեան
սաղմեր, որոնք շնորհիւ այլպիսի շըչանների, ժամա-
նակի ընթացքում կարող են աճել, մեծանալ և կանո-
նաւոր ստախօսութեան, անբարոյականութեան, ուրիշ-

Ներին վնասելու վտա սովորութիւն դառնալ։ Մանուկ-ների մէջ պատահում են այնպիսիները, որոնք այդ հակումները աւելի շատ ունին իրանց մէջ, քան միւս հասակակիցները։ Այդպիսիների վրայ աւելի ուշը պէտք է դարձնել, առաջն առնել, եթէ ոչ սուտը, անձմար-տութիւնը, կեղծիքը զբանց համար ամենաթանգ, ամե-նաստոր բաները կը լինին։ Այսպիսի դեպքերը իհարկէ մանուկները, նպատակով, գիտակից կերպով չեն անում, այլ դա ինքն իրան, առանց յետին մտքերի առաջ են դալիս։ Դուք զալ ամերին, բոլորին գովելի, սիրելի լի-նել, առաւելութիւններ ձեռք բերել՝ ահա այս է սկզբե-նապատճառը։ Ինչպէս ասացի, նորից կը կնում եմ, որ այստեղից էլ սկսում է ստի, կեղծիքի, վատութեան աղբիւը, որոնք, երեխաների պակասութիւնների մէջ, կարելի է ասել, ամենախոշորը, ապագային դառն հե-տեանքներ ունեցողը կարող է լինել։

Ե. Վախից առաջացած ստախօսութիւնն. Մանուկների ստախօսութեան գլխաւոր աղբիւըներից մէկն էլ հա-մարում է երկիրը. այս առաջ է զալիս երեմն դուք գալու ցանկութիւնից, երեմն քաշուելուց և վախից։ Այսպէս օր. հարցնում էք տղայից. «Դու ինձ սիրում ես», «Այս բանը գեղեցիկ չէ», «Կուշտ ես, այնպէս չէ», ևայլն։ Այսպիսի հարցեր տալով՝ հասակաւորները փոր-քերին մի տեսակ ճնշում, նեղ դրութեան մէջ են զնում։ Այս զգացմունքները դուք գալու ժառանգականութեան հետ միանալով, նրանք հասկանում են, որ այն, խօս-քը նրանց աւելի հաճելի կը լինի, քան ոչ—ը։ Հինց այս պատճառով մեծ մասամբ հարցերին դրական պատաս-խան են տալիս։ Այստեղ մեծ նշանակութիւն ունի ան-շուշտ հարցնողը. այսպէս, եթէ այդ մարդը իրանց տան մէջ ընդունուած, գնացող եկող է կամ իրա հա-

մար քաղցրաւէնիք, խաղալիքներ բերող է, կամ թէ խաղերով, զուարճութիւններով, իրան զուրեկան ան-ձնաւորութիւն է՝ միշտ հակառակ իրա ցանկութեանը՝ այն է ասում։ Եթէ պատահի, որ մանուկը զգացածը ուղիղ չասէ, մէկ էլ տեսնես ծնողները աչքով, ունքով, ձեռքերի շարժումներով, ստիպում են այն, ասելու։ Առանձին մնալիս նրան խրատում, համոզում, նոյն իսկ ստիպում են ամեն ինչ ուղիղ չասել, որով խեղճ մա-նուկներին պակասութիւնների մէջ վարժեցնում են։ Տեսել եմ փոքրիկներ, որոնք իրանց չիրած մարզուն չեն ուզեցել ասել, թէ քեզ սիրում եմ և զրա համար կա-կարմիր կտրուելով, քրտնել և վերջը գլուխները քաշ գցած մօր հարցեցին որպէս պատասխան յայտնել են. «Այն սիրում եմ»։ Ես առջիւ, մի յայտնի կին իր անցած լիշողութիւններից հետեւալն է պատմում. «Երբ գեռ երեք տարեկան չկայի, մօրս ընկերութիւններից մէկը մեղ մօտ այցելութեան եկաւ. նա իմ անունիս շատ հաւա-նելով ասաց. — Ինչ լաւն է, իմ աղջկայ անունը էլքնօրա է, ինչ ես կարծում Մարգարիտ, այդ էլ լաւ անուն չէ։ Էլքնօրա խօսքը ինձ բոլորովին դուք չեկաւ, չնայելով դրան, այնուամենայնիւ ինձ բոլորովին զսպեցի և կո-պիտ չերեալու համար հազիւ հազ ասացի. «Այն, բայց Մարգարիտ անունը, աւելի դուրեկան է»։ Այս բանը տիկին Մարգարտի վրայ այնշափ զօրեղ էր ազգել, որ նա երբէք չէր մոռանում և միշտ յիշում էր, թէ ինչպէս շատ անգամ մեծերը ազգում են մանկան մատաղ հո-գու վրայ և ուզում են իրանց ցանկութիւնը, սպասածը, նրանք կատար են։

Երբ մանուկները գիտեն, որ իրանց կոտրած խա-ղալիքի, լուսամուտի ապակու համար պէտք է հօրից ծեծ, յանդիմանութիւն ուտեն, այդ բանից ապատուելու հա-

մար՝ ստիպուած մերժում են, թէ իրանք չեն արել. կամ եթէ համոզուած լինին, որ ծնողները, եղբայրները և առհասարակ մեծերը ընկերների հետ կատարած չարութեան համար պէտք է պատժեն՝ ամեն միջոց դործ են դնում, ուրանալու:

Մի անգամ հասակաւոր աղջիկը հօր սիրած բաժակը կոտրեց. նա սաստիկ վախեցաւ և չփառէր թէ ինչ պէս ազատուի հօր բարկութիւնից. մի փոքը մտածելուց յետոյ հարը զանելով, կարծես հանգստացած ուղում էր զուրս զնալ՝ երբ յանկարծ փոքրիկ եղբօրը նկատեց.

«Տեսար, ով կոտրեց բաժակը». — Դու, ով, պատասխանեց նա: —

«Հինի թէ հայրիկին ասես, այ հոգիկ կը հանեմ հա. որ հարցնեն, ասա կատուն է տրել.

«Եփի կրինում եմ, հայրիկին չասես, եթէ ոչ կ'սպանեմ»: Մանուկը համաձայնութիւն յայտնեց. մի երկու ժամից յետոյ, երբ հայրը ներս էր մտնում, փոքրիկ տղան վագեց հօր տաշ և թոթով լեզուով ասաց. — Հայրիկ, զիտեն բաժակը քոյրիկը չկոտրեց:

Մի նշանաւոր կին պատմում է. «Երբ փոքը էի, մայրս ուղարկեց անտառ չոր տերեներ բերելու. յանկարծ թփերի տակ մի օձ տեսայ, վախից էլ չփառեցայ թէ ինչ անեմ, զոռալով տուն վագեցի, եղբայրներս չարշարելու համար, սկսեցին հարց ու փորձ անել. նրանք օձերի բոլոր յատկութիւնները ինձանից լաւ դիտելին և իրանց հարցերով ուզում էին սխալների մէջ ձգել, որ վերաս ծիծաղեն, այսպէս, նրանք հաստատում էին, թէ օձ չէ եղել տեսածո: Տեսնելով իմ բարկութիւնը, նրանք աւելի ու աւելի հետաքրքրուում էին: «Եթէ օձ էր տեսածդ, դէ՞ս ասա տեսնենք վրան ինչ

կար, բկին կարմիր օղակ ունէր», հարցնում էին նրանք: Եղբայրներիս ծիծաղը իմ մանկական վառ երևակայութիւնը այնպէս սաստիկ գրգռեց, որ ես հաստատումէի, թէ իհարկէ, կարմիր օղակ էլ ունէր և մի փոքրիկ զանգակ էլ վզից կախ էր արած»: Ամենքն էլ ասածներիս համար աւելի զուարձացան և ինձ ստախօս անուանեցին»:

Մեր ընտանիքների մէջ հօ շատ սովորական բան է երբ ջանել մայրերը տղաներին երկիւղ են տալիս սաստում են. «Սուս կաց, լաց մի լինիր, եթէ ոչ բոբոլը կը գայ կը տանի»: Եթէ տղան նոյնիսկ ցաւից կամ այլ յարգելի պատճառներից ստիպուած ձայնը չկտրէ՝ մօր կարգագրութեամբ, մօտիկ փայտանոցից, մառանից, այնպիսի սաբսափելի ձայներ են զուրս զալիս, որ երեխան վախից վեր է թռչում և սարսափից թմրում, ձայնը կտրում է: Այսպէս էլ երկիւղ է տալիս սատանայով, ուղարկ, զողով, աղքատով և այլ այսպիսի բաներով նրանց լաւցնելու, ու առ ժամանակ հանգստացնել են տալիս:

Քանի երեխաները փոքր են, այսպիսի վարմունքները նրանց վրայ ազդում են. բայց հէնց որ մի փոքր խելանաս են զառնում, հասկանում են բանի էութիւնը՝ ահա իրանք էլ նոյն միջոցներով ուզում են ուղիշներին լուեցնել: Այսպիսով, մեծերի լուեցնելու միջոցները էլ չի օգնում, ծնողների օրինակը նրանց առաջնորդ է լինում: Փօխանակ երեխաների լացի աղմկի, անհանգըստութեան շխաղալու պատճառը գտնելու և սիրով, քաղցր կերպով նրանց հետ ձեռքի տուած միասին արգելքները վերացնելու, հետաքրքրեցնելու և խաղընկեր առաջնորդ լինելու՝ սուտ կեզծ միջոցների են զիմում և երեխաներին իրանց ձեռքով փշացնում, նա-

խապաշարեցնում, չեղած բաներին հաւատացնում են
և այլն:

IV.

ՍՏԱՑԱՆԱՆ ՍՏԱԼԽՈՒԹԻՒՆ

Մանուկների խաքերայութեան, ստախօ-
սութեան մէջ, միմիայն դաստիարակներն
են մեղաւոր Բուսսօ.

Այս խօսքերը թէե չափազանցութիւններ են, բայց
իրանց մէջ ճշմարտութիւն շատ են պարունակում, օրի-
նակները մեզ ամեն ինչ կը պարզեն և մենք իսկութեամբ
այդ կըտեսնենք։ Ստացական ստախօսութիւնը մա-
նուկները ձեռք են բերում գլխաւորապէս երկու ճա-
նապարհով։

Առաջին, մարդու անձնական օրինակով.

Երկրորդ, գանազան առիթներ տալով.

I. Մարդու անձնական օրինակներով, տղաները
ստախօսութիւն ձեռք են բերում։

Ա. Հանաքներից, զուարժութիւններից։ Այսպէս, մի
հայր սիրում էր որդու հետ հանաքներ անել, դրա
համար զանազան ծիծաղելի, զուարժալիքներ էր պատ-
մում. երբեմն էլ այնպիսի յիմարութիւններ, անմիտ չա-
փազանցութիւններ ասում, որ լսողը միայն զարմանալ
կարող էր։ Տղան այդ ամենը ճշմարտի, իսկականի տեղ
էր ընդունում, հայրն էլ տղայի անմտութեան վրայ շատ
զուարժանում էր. մանաւանդ, երբ նա այդ բոլորին
հաւատացած ուրախ-ուրախ ուրիշներին էր պատմում։
Հօր ուրախութեանը շափ չկար և քաջալերուելով, աւե-

լի մեծ մեծ յիմարութիւններով էր տղին զբաղեցնում։
Հօր պատմածների հիման վրայ տղան մի օր տատին
պատմում է։

«Վաղը հայրիկի հետ գնալու եմ պաղի տալու (սա-
ռուցի վրայ սահելու), տեղաշորես էլ հետներս ենք
անելու, որ չմըսենք. գիտես տատի ջան, մեզ ու շո-
րես տանելու համար, չորս հատ խոզ պիտի լծենք։

Կամ թէ. «Գիտես Կարապետ, երեկ մեր գոնապան-
հուին մեծ աւելի վրայ նստած գըռգըռալէն քաղաք
զնաց»։ և կամ «Արտաշէս, հայրիկն ասում է, որ մենք
այսօր հիանալի խորոված պիտի ուտենք, երկու մեծ
շաղացրած ճանճ, մէջտեղից կտրած տապակելու է
տարած, այ թէ համեզ բան կըլինի։ Հա, այդ ճանճե-
րի թեերիցն էլ չոփիսիկի համար հովանոց ենք շի-
նել տալու և եալին։

Երբ տղան միամտաբար այս բաները պատմում էր
հայրը փառաց ի փառս լինելով, ծիծաղից թուլանում
էր որդու միամտութեան վրայ և զուարժանում էր.
հետզհետէ ժամանակի ընթացքում այնպէս ճարպիկ
կերպով ստեր էր հնարսում և զուարժալի պատմում, որ
ամերի ուշագրութիւնը գրաւում էր։ Երբեմն էլ նա իր
ասածները այնչափ լուրջ էր առաջ տանում, որ նոյն
խոկ հայրն էլ չեր կարող երեակայել, թէ զբանք կարող
են սուտ լինել։ Երբ մի քանի օր յետոյ բանը բացւում
էր, ծնողները զարմանում էին. հիմայ էլ որդին հօր
վրայ կուշտ ծիծաղում և ասում էր. «Ես ձեզ գլխէհան
արի, հանաք արի. տեսաք ինչպէս հաւատացիք»։

Տարիներ յետոյ այս տղան այնչափ առաջ զնաց իր
զուարժալի սասութիւններ պատմելու մէջ, որ ոչոք նրան
չէր հաւատում. ամեքն էլ ծիծաղում էին և չփիտէին
թէ նա սուտ է ասում, թէ ճիշդ:

Յաւն այն է, որ ուղիղ ասածին էլ չէին հաւատում որչափ էլ նա երգում պատառ էր ուսում, չէր լինում ու չէր. ամեքն էլ հեզնելով ասում էին. «Ելի շատախօսութիւն է անում, զըան ով կարող է հաւատալ»: Ծնողները աշկարայ տեսնում էին իրանց ցանած սերմերի հետևանքը, տղայի թշուառութիւնը, դործի, ընկերութեան և ընտանեկան կիանքի մէջ, բայց էլ ինչ օգուտ, ամեն ինչ անցել էր:

Բ. Քաղաքավարութիւնից ստացացած ստախօսութիւն. «Այս տիկին Կատարինէ, սըչափ ուրախ եմ ձեզ տեսնելուս համար. սրտանց ցանկացել եմ այցելել, բայց հնար չէ եղել. հինց երէկ մեր Սիրանուշի հետ դրա մասին էինք խօսում, ամբողջ զիշելը մտածելով չընցից»: Այն ինչ առաջին օրը աղջկայ մօտ պատմում էր, թէ տ. Կատարինէն անտանելի շատախօս, կեղծաւոր անձնաւորութիւն է, որ ինքը հոգով ուրախ է այդպիսիների հետ երթ ու գալ չունենալ:

— Հաւատացէք պարոններ, որ այդ մարդը բանի պէտք չէ, ոչ մի արժանաւորութիւն չունի և բացարձակ կերպով կարելի է ասել, որ նա անագնիւ, օտար, շողոքորթ ճանապարհով է այդ առահճանին հասել. թքիր, մըիր, խայտառակիր, այդ միննոյնն է, բաւական է որ իրա օգտին չկպչես: — Այսպէս տաք տաք մեզգադրում էր մի զարգացած պարոն իր ընկերոջը որոշ մարդկանց շըջանում: Մի քանի օր յետոյ, ճաշկերոյթի սեղանի վրայ այդ նոյն պարոնը, առանց ամաչելու միննոյն մարդուն սկսում է զովիլ, խօսքեր շռայլել, թէ նա բարեխիղճ, աշխատաւոր, ազնիւ հասարակական դործիշ: «Անցեալ և այսօրտայ խօսքերիդ մէջ ոչ մի նմանութիւն չկայ», նկատում է ընկերներից մէկ. — բան չունիս է. միթէ պօլիտիկա ասուած բանի հետ ծանօթ

չես, այնտեղ այդպէս էր պահանջւում այստեղ էլ այսպէս: —

— Պարոյը, նոր տարի է, գնանք մեր տիրոջը շնորհաւորենք, զա մի պարտականութիւն է մեզ վրայ դրած: Ո՞րչափ ուրախ կը լինէի, երբ սրանից ազատուէի: Ստիպուած եմ զնում, նա այնպիսի կոպիտ, չար մարդ է, որ եթէ խարուիմ միանգամ շշնորհաւորել՝ ամբողջ կեանքում ինձանից վրէժինդիր կըլինի. ահա թէ ո՞րպիսի հրէշ մարդ է: Գնում են այցելութեան և ահա պատկերը փոխում է: Պարոյը տեսնում է, թէ ինչպէս հայրը ծպիտը երեսին, խոնարհուած, ուրախ զուարթոց թէ միայն տիրոց նոր տարին է շնորհաւորում, այլև զովասանական խօսքերով ասում է. «Մեծարգոյ պարոն, այսօր պարտք ենք համարում մեր անկեղծ բարեմաղթութիւնները հանդիսաւոր օրում մատուցանել. թող համոզուած լինի մեր տէրը, որ ոչ թէ սովորական ընդունուած ձեւի համար եկանք Զեղ շնորհաւորելու, այլ մեր անկեղծ սիրոյ պարտքը սիրակեց մեզ այդ անելու և ամենախսնաբար խնդրում ենք երկնաւոր Հօրից, որ իր առատ օրհնութիւնը Զեղ վրայ թափէ»: Այս բանից յետոյ, միթէ աղաները մի ուրիշ տեղում զրաւոր կամ բանաւոր կերպով իրանց չզգացածը, ցանկութիւններին հակառակ բանը զանազան շողոքորթութիւններով շպիտի արտայայտեն. կամ թէ տեսնելով չորս կողմի մարդկանց, մօտիկների կեղծիքները, միթէ պիտի կարողանան զիմադրել, կուտել և չընկնել նոյն պակասութիւնների մէջ:

Սրա նման էլ շատ անգամ նորաձեռութեան պատճառով երեխաններին ստիպում են կեղծ քաղաքավարութիւն սովորել, ստել, զգացածը շանել: Ճատ անգամ տեսած կըլինէք, որ յաճախ ծնողները, մեծերը պա-

հանջում են փոքրիկներին բարե տալ նրանց, յարգել այնպիսի մարդկանց, որոնցից նրանք զգւում են: Տղաները նրանց մասին տեսակ տեսակ պակասութիւններ լսել են նոյն իսկ ծնողներից. բայց նրանց ներկայութեամբ ծնողները կեղծում և ստիպում են մանուկներին անել այն՝ ինչ որ չկայ: «Ճռւտ սրա ձեռը պաշիր, թող ճակատդ համբուրէ, նա քո հօրեղբայրն է.» ինչ փոյթ թէ տղաները զգւում են, չեն սիրում կամ նրանց դուք չի գալիս: Տղաների զգացմունքները ճնշելով, ձեական քաղաքավարութեան պատճառով՝ նրանց մատադ զեռ չկազմակերպուած բնաւորութիւնները, փշացնում են կեղծիներով: Եթէ պատահի, որ այդպիսի ժամանակ մանուկները սասւը վարուին, կամ ծնողների ցանկութիւնը չկատարին, ոկտում են նրանց գլխին զայլի աւետարան կարգալ. «Անպէտք տղայ ես, այդպէս չի լինի, զոնէ մեղ չցաւեցնելու համար պէտք է ասածներս անես, զա անքաղաքավարութիւն է, այդպէս ապրել չի կարելի եալին»:

Իսկ եթէ պատահին բնականից մաքուր հակումներով մանուկներ և բնագգարար հակառակուեն ծնողների պահանջներին և ասեն. «2է որ զբանք կեղծ են, զոք էլ նրան չէք սիրում, ուրեմն ինչո՞ւ էք ստիպում այդ մարդուն աւելորդ յարգանքներ, բարեներ տալ՝ երբ այդ ամենը սուտ, կեղծիք են»: Այսպիսի դէպքերում մի այլ կարգ ծնողներ թէե տղաների աշգար գատը ճանաշում և համուլում են՝ բայց և այնպէս խրատելով ասում են. «Աշխարհո այդ է պահանջում այ որդի, ուրիշ կերպ չի կարելի անել, հօ միայն դու չես կարող աշխարհո վտիսել, ամենքն էլ այդպէս են եալին»: Կան ծնողներ էլ, որոնք երկիւզ տարով. բարկանալով, պահանջում են որդիներին իրանց ներկայութիւն է, որ առաջ կարող է այդպէս վարուել. իր աշակերտութեան ժամանակ բազմաթիւ անգամ տեսել, լսել և վարպետի պատուէրով ինքն էլ կատարել է. միթէ հիմայ կարող է ուրիշ կերպ վարուել, ինչ որկէ ոչ: Եթէ սկզբից այսպէս չլինէր, անպատճառ այդպիսի բաններ չէր լինի և պատուէր տուողը զոհ կրմար. բայց ինչ է պատահում: Գալիս է վարպետի նշանակած օրը, պատուէրը պատրաստ չէ, իսկ պատուէր տուողը գալու է. ինչ անեմ մտածում է ինքն իրան. Էհ, հօ սուտը պակաս չէ, ասում է վարպետը, գուրս է զալիս զուքանից՝ պատուիրելով աշակերտին. «Եթէ այս ինչ մարդը զայ, ասա տանը հիւանդ ունելը, կանչեցին բժիշկ հասցնելու». Իսկ երբ յաջողեցնում են նրան զրսում ահսնել՝ մէկ էլ առանց շփոթուելու, ճարպիկ կերպով յայտնում է՝ թէ բանուորը տկար էր, քանի օր է զործի չէր եկել, ինքը մեղաւոր չէ եալին: Սրա նման գէպքեր պատահում են ուսանող աշակերտ զասակարդի մէջ: Տեսնում էք ծնողները շատ մեծ զժուարութեամբ, իրանց բերանից կտրելով, ուսանող որդուն կանոնաւոր ամսականներ են հասցնում. իսկ որդին ոչ թէ իր զործերը լաւ չի տանում, ծնողների սպասած ապագայ յոյսերը ինկատի չեն ունենում, անգամ անհրաժեշտ զբքեր չառնելով՝ փողի մեծ մասը ուտելու, խմելու, արբեցողութեան

Ք. Կարիքից, առանելութիւն ծեռք րերելուց, ցուցամնալութիւնից առաջ եկած ստախօսութիւն. Ճատ տարածուած սովորութիւն է, արհեստաւորների մէջ որ ասում են. «Արհեստաւորը առանց սուտ ասելու չի կարող ապրել» և իսկապէս համարեա միշտ այդ խօսքերի իմաստի համաձայն ասում են: Խոստանում են ստացած պատուէրը այս ինչ օրը տալ, թէե ինքը զիտէ, որ դա անկարելի է. չնայելով զբան, բայց և այնպէս նա սովոր է այդպէս վարուել. իր աշակերտութեան ժամանակ բազմաթիւ անգամ տեսել, լսել և վարպետի պատուէրով ինքն էլ կատարել է. միթէ հիմայ կարող է ուրիշ կերպ վարուել, ինչ որկէ ոչ: Եթէ սկզբից այսպէս չլինէր, անպատճառ այդպիսի բաններ լինի և պատուէր տուողը զոհ կրմար. բայց ինչ է պատահում: Գալիս է վարպետի նշանակած օրը, պատուէրը պատրաստ չէ, իսկ պատուէր տուողը գալու է. ինչ անեմ մտածում է ինքն իրան. Էհ, հօ սուտը պակաս չէ, ասում է վարպետը, գուրս է զալիս զուքանից՝ պատուիրելով աշակերտին. «Եթէ այս ինչ մարդը զայ, ասա տանը հիւանդ ունելը, կանչեցին բժիշկ հասցնելու». Իսկ երբ յաջողեցնում են նրան զրսում ահսնել՝ մէկ էլ առանց շփոթուելու, ճարպիկ կերպով յայտնում է՝ թէ բանուորը տկար էր, քանի օր է զործի չէր եկել, ինքը մեղաւոր չէ եալին: Սրա նման գէպքեր պատահում են ուսանող աշակերտ զասակարդի մէջ: Տեսնում էք ծնողները շատ մեծ զժուարութեամբ, իրանց բերանից կտրելով, ուսանող որդուն կանոնաւոր ամսականներ են հասցնում. իսկ որդին ոչ թէ իր զործերը լաւ չի տանում, ծնողների սպասած ապագայ յոյսերը ինկատի չեն ունենում, անգամ անհրաժեշտ զբքեր չառնելով՝ փողի մեծ մասը ուտելու, խմելու, արբեցողութեան

վրայ է ծախսում: Բացի դրանից ստիպողական կերպով ծնողներից աւելի փող է պահանջում, դժգոհ կերպով յայտնում է, որ ինքը տանչում, շարչաբում է ամենահարկաւոր կարիքներն անգամ շի կարող հոգալ և այն: Եթե ուսանողի մօտիկները պախարակում են դրա համար պատասխանը լինում է շատ կարճ. «Ի՞նչ անեմ շեմ կարող զրել, թէ քէֆի համար եմ ծախսել, հարկաւորութիւն կայ, իսկ կարիքն ստիպում է ամեն բան անել. կարիքը ոչ մի պատուէր շի ճանաշում»:

Մէկը պատմում է, թէ ինքը քաղաքազլիխի, այսինչ ազնուականի կամ անուանի հարստի հետ ընկեր է եղել, միասին սովորել, իրար հետ խաղացել և հէնց հիմայ էլ շուտ շուտ իրար տեսնում են. այն ինչ այդպիսի բան չէ եղել. Մի ուրիշը պատմում է, թէ ինքը հարուստ ազգական ունի և նրա ժառանգն է համարում: Արբեցող, ընտանիքի վրայ ուշը չգարձնող աշխատաւորը տիրոջ մօտ շարունակ պարծենում է, թէ ամեն օր շուտ է տուն գնում, երեկոները, կնոջն ուրախացնում և պարտականութիւնը կատարող հայր է. այնինչ նա զիշերները զինետներում էր անցկացնում և քիչ էր պատահում, որ որդիների երեսը տեսնէր. նա նպատակով տիրոջը խաբում էր, որպէսզի նրա աշխում զին ունենայ և ամսականը շատացնէ: Պատահում են կանաք, մարդիկ, որոնք պարծենում են, թէ իրանք ամեն օր եկեղեցի են գնում, այն ինչ այդպէս չէ: Սովորողները երբեմն ուսուցչին յացտնում են, թէ իրանք առաւտները վաղ 5-ին, 6-ին են վերկենում, զասերը պատրաստում եալին. կամ թէ տանը պարծենում են. այսօր մեր զլաւոր աշխատանքը զասարանում ամենից լաւն է եղել, իւանք ուսուցչի դու՛քաւանքին են աւժանացել, այն ինչ իսկութիւնը այդպէս չէ:

Այսպէս էլ ստախօսութիւնը առաջ է գալիս նախանձից, տաելութիւնից, չարակամութիւնից:

Դատ տարածուած և սովորական երևոյթ դաշտած մի բան է մեր կողմէրի համար. «Ի՞նչպէս կարելի է վաճառական լինել և սուտ շխօսել, առանց ստի անհնարին է օգուտ ստանալ». Ամերիս էլ յայտնի է այսպիսի դարձուածքներ նաև մեր վաճառականների համար: Խսկապէս էլ, ամեն մի քայլափոխում, իրականութան մէջ այս երեսյթները միշտ պատահել և պատահում են: Բազմաթիւ օրինակներից մի երկուսն առաջ բերեմ:

— Հաւատա բարեկամ, բոլորովին նոր ապրանք է, երեկ ենք ստացել. գուցէ կարողանաս մի փոքր էժան գտնել, բայց կարող է հին լինել և տուածդ փողը իգուր կըկորչի - տառմ է վաճառականը զնողին: Փոքրիկ տըզան, որ այդ խօսակցութեանը ներկայ էր, տառմ է. «Հայրիկ, չէ որ այդ ապրանքը անցեալ աշնանն ենք ստացել, ինչու սուտ ստացիր»:

— Սուս կաց Լեռն, այդ քո զործը չէ. սա դուքան է, ուսումնարան չէ. բարոյական զասերը կըօնի պատուէրները այստեղ չեն անցնիլ. եթէ այդպէս շասեմ, այն ժամանակ այս ապրանքը չի ծախուի և ես կը վնասուիմ»:

«Հազար անդամ տսել եմ քեզ, որ եթե տսեմ լաւ ապրանք բեր, գու հասարակները ցոյց տուր» շատ անգամ նախատում են տէրերը իրանց ծառայողներին: «Չեմ կարող զբա նման տղին պահել, բոլորովին բան չի հասկանում, միշտ ուղիղն է տուրմ, չի աշխատում նեղութիւն քաշել, որ երկու անգամ՝ աւել զին ուզէ, մանաւանդ ցանկացողն էլ բոլորովին նոր մարդ է, ով է իմանում մէկ էլ երեսը տեսնենք թէ չէ. չէ զբանից

մարդ զուրս չի գայ, աշքաբաց տղայ եմ ուզում, որ
իսկոյն գլխի ընկնի և գործը մեքենայի նման տանի»:
Սրանց նման վարժունքները երկիւղները թէ ինչպիսի
վատ աղքեցութիւն են թողնում մատաղ նոր կազմա-
կերպուող մանուկների վրայ՝ այդ արդէն ամեն մարդ
էլ կարող է իմանալ:

Բազմաթիւ անզամ մեզանից իւրաքանչիւրը ներկայ
է եղել, թէ քէֆերի ժամանակ, կենաց խմելիս, ինչպէս
մարդիկ շատերի ներկայութեամբ մէկ մէկու գովում են,
շունեցած արժանաւորութիւններ են նրանց վերագրում,
կեղծում, ստում են, այն էլ բացարձակ կերպով, օրը
ցերեկով: Սրա նման էլ քարոզիչը իր քարոզներում,
ճառախօսը իր ճառերում, ճարտասանը կըակոտ խօս-
քերում, վարժապետը դասարանում եայլն: Կան մար-
դիկ, որոնք զգում են, զիտեն, որ կեղծիք է, բայց «ինձ
ինչ կայ, ինչուս է պէտք» ասելով լուսմ են: Կան էլ
որ բոլորովին անտարբեր են. կան, որ թէն բորբոք-
ում, ասում, խօսում են՝ բայց զործի չեն հասցնում:
Միայն շատ քչերն առանց որեէ հանգամանք աշքի
առաջ ունենու, ուղղակի երեսին են խփում, ճակատին
ասում. զժբաղդաբար պէտք է նկատել, որ հէնց սրանք
էլ հասարակութեան մէջ շատ յարդ ու պատիւ չունին:
Ումանք սրանց «բոշբողագ» են ասում, ումանք անհեռա-
տես, ումանք էլ յիմար և այլ այսպիսի անուններ: Իզուր
չէ ժողովրդական առածն ասում. «Ուղիղ խօսողի թա-
փէն ծակ է», կամ «ուղիղ խօսողի ձին զուանը պիտի
կանգնած լինի, ասէ ու փախչի»:

V.

II. Առնթոներ ՏԱՀՈՒՅ ԱՌԱՋԱՑԱԾ ՍՑՐՈ-
ՍՈՒԹԻՒՆ

Սրա վրայ պատահում են հետեւեալ գէպքերը.—

Ա. Անմիջասպէս առիթ տալուց. այսպէս օր. «ինչ
ասեմ մայրիկ, որ վարժապետի յանդիմանութիւնից
ազատուեմ. չէ որ ես ուզում էի երեկ զպրոց գնալ, զու
այնչափ այս ու այն կողմ ուզարկեցիր, որ ուշացայ,
ասում է զժոն կերպով տղան մօրը. կարող եմ ասել,
թէ կօշիկներս պատուել էր, չկարողացայ զալ»:

— Ո՛չ, ասա՞ թէ խիստ վիխացաւ ունէի, կարող էք
մայրիկիցս հարցնել. —

«Հայրիկ, գարձեալ այն մարդն եկել փող է խնդրում,
ասում է աղջիկը հօրը.

— Ելի այդ մարդը, ախ, Աստուած (բարկանալով),
գնա, ասա՞ թէ հայրս տանը չէ. —

«Յոլակ, տար այս փողերն այն անպիտան հարեւա-
նին և քաղաքավարի կերպով ասա. հայլ ս շատ ցաւում
է, որ ինքն անձամբ չի կարող զալ, նա շատ հիւանդ,
անկողնում պառկած է: —

— Բայց հայրիկ, չէ որ զու հիւանդ չես, զարմացած
հարցնում է Յոլակը.

«Ճատ մի խօսիր, կատարիր, ինչ որ քեզ ասում են.
զէ, շուտ արա զնա»: Այսպիսի մի շաբք գէպքերից
յետոյ՝ մի օր Յոլակը զպրոցից մի ժամ ուշ տուն զար-
ձաւ. հայրը հարցնում է. —

— «Պատժուել ես».

— Ո՛չ, հայրիկ, վրայ է բերում տղան լուրջ և հան-
գիստ կերպով, ուսուցչին մի փոքրիկ ծառայութիւն

անելու համար, ընկերներիս հետ նրա տետրակները
հետը տուն տարանք և ուշացանք:

«Բայց չէ որ դրա համար մի ժամ հարկաւոր չէ».

— Հայրիկ, այս էլ ինկատի ունեցիր, որ նա մեզ
ներս հրաւիրեց, շատ գեղեցիկ, փոքրիկ թռչնիկ ցոյց
տուեց օհ, որշափ հիանալի, լաւն էր. այդ թռչնիկը
չնդկաստանիցն է ստացել. դեռ այս բաւական չէ, նա
մեզ այնտեղի կենդանիների պատկերներց ցոյց տուեց.
Բնչ զարմանալի երկիր է, որ այդպիսի հրաշալիքներ
իր մէջ ունի»: Այսպէս տղան այնշափ լուրջ կերպով
այդ բոլոր ստերը հնարեց, որ հայրը չկարողացաւ կաս-
կածել, թէ նա պատժուել է: Այսպէս էլ երբէք փոք-
րին չպիտի ասել, թէ այս բանը հայրիկիդ շասես.
Անմի թէ սրա մասին տանը խօսես, կամ թէ թող հայ-
րիկը, մայրիկը, քոյրիկը այս շիմանան, միայն մենք
պիտի զիտենանք և կամ թէ մայրիկին այսպէս շասես,
այլ այսպէս եայն:

Այս տեսակ վարմունքները բոլորն էլ երեխայի բնա-
ւորութիւնը փշացնում, ստախօս, խաբերայ և խարդախ
են դարձնում:

Բ. Պատժով առիթներ տալոց. «Գիտես մայրիկ, այս-
օր դասս շիմանալու համար, ուսուցիչը մի ժամ
պատժեց».

— Այ դու անպիտան. ես քեզ ցոյց կը տամ ծու-
լանալ, բարկացած յայտնեց միւս կողմից հայրը. դու
այսօր հէնց դրա համար ճաշից կըզեկուես. աչքի առաջ
ունեցիր, որ այսուհետեւ երբ դպրոցում պատժուես,
նրանից էլ խիստ տանն ես պատժուելու. վայը կըզայ
քեզ կըտանի, եթէ դասերդ չսովորիս: Հաւատա՛, ոչ թէ
միայն ճաշից, այլև իրիկնահացից էլ կըզեկուես և
քաղցած փոքրով կըքնես. ես աւելորդ փող չունիմ, որ

քեզ համար դէն շպրտեմ: Այսպէս մի քանի անգամ
կրկնելուց յետոյ, տղան քանի գնաց աւելի ու աւելի
հնարագէտ զարձաւ և վերջն այն աստիճանի հասաւ՝
որ էլ ոչ մի անգամ դպրոցում պատժուելու մասին
բան չէր ասում, այլ շարունակ ուրախ գուարթ ճաշում,
ընթրում էր: Այսպէս էլ շատ անգամ ծնողները պա-
հանջում են տղաներից սուտ չխօսել և միշտ ուղիղն
ասել: «Եթէ սուտ անես, հոգիդ կը հանեմ, բերանդ աղ
ու տակտեղ կըլցնեմ», երկիւղ են տալիս նրանք: Հէնց
այս պատճառով սկզբներում մանուկները պատիժ չստա-
նալու համար, նոյն իսկ յանցանք դործելիս՝ ամենն ինչ
ուղիղ ասում են. բայց երբ տղէտ ծնողները իրանց
խօսառումը չպահելով նրանց խօստովանած յանցանքի
համար պատժում ծեծում են՝ առա այդ ժամանակ տղա-
ները այդպիսի անգուրեկանութիւնից ազատուելու հա-
մար՝ ստիպուած հետզետէ սկսում են սուել, դրա մէջ
վարժուիլ և վերջն էլ ստախօս գառնալ: Սրա հակա-
ռակ, երբ ծնողները որդիների վրայ ցաւում, օգնում
են, լաւ չզիտեցածները բացատրում են, հետները պա-
րապում, քաջալերում են՝ այն ժամանակ մանուկը միծ
օգուտ կ'ստանայ. այսինքն աշխատանքի սովորելով,
առիթ չի ունենայ յանդիմանութիւն ստանալու, աւելի
առաջ կը գնայ, ապա մօտիկների սէրը, համակրութիւնը
տեսնելով՝ կարիք չի ունենայ կեղծելու, ստելու, բնա-
ւորութիւնը փշացնելու: Մի տեսակ ծնողներ էլ, երբ
տեսնում են, իրանց գործ դըած խիստ միջոցները
իզուր անցնում են և անհնարին է դրանով սուտ խօ-
սելու առաջն առնել՝ նոր ստիպում են քաղցը համոզե-
լով նրանց խրատել, օրինակ դասնալ, որ սուտ չխօսեն.
բայց աբդին ուշ է, ստախօսութիւնը նրանց համար
սովորութիւն է դարձել, իսկ սա մի ահսակ ելկուբդ

բնաւորութիւն է, որը փոխելը շատ դժուարէ, Այսպէս օր. մի հայր որդու հետ շատ խիստ էր վարւում, ամեն մի հասարակ, անմեղ պակասութեան համար տղային յանդիմանում, անպատում, ականջները քաշում և ծեծում էր. մի խօսրով վայ կրգար տղին, եթէ մի փոքրիկ պակասութեան մէջ բոնուէր. Խեղճի օրը օր չէր, ամեն մի քայլը, նիստ ու կացը, շափած ձեած էր. ոչ մի ազատութիւն, հանգստութիւն չկար. Տղան սկսեց հետզհետէ արածները թաղցնել, ստել և կեղծել:

— Ո՞վ է թանաքը սեղանի վրայ թափել, գոռալով տառմ էր հայրը.

« Զգիտեմ հայրիկ, Աստուած վկայ չզիտեմ»:

— Բայց չէ որ տանը ուրիշ մարդ չկար, բացի քեզանից. —

« Կարելի է կատուն է թափել կամ շանն է բարձրացել. ես ինչ մեզք ունիմ, ինչ անեմ» տառմ էր տղան դոդողալով:

Տնայելով տղի ահ ու դողին, բայց և այնպէս, խրստասիրտ, տղէտ հայրը թագում և ճաշից էլ զրկում էր. Ժամանակի ընթացքում տղան ստելու, թագյնելու մէջ այնչափ առաջ գնաց, որ հայրը շատ անդամ ոչ թէ չէր կարող ստի հետքը դոնել, այլի ժամանակ էլ չէր կարող լինել այդշափը ստուգելու. Այսպէս փողոցից վերադառնալիս իրաք վրայ ստեր էր պատում. թէ ճանապարհին տէրտէրին տեսայ, հետք խօսեցի, այս ինչ տան մօտով անցնելիս, մի անդիտան տղայ լուսամուտից ծաղկամանը վայը ձգեց, քիչ էր մնացել զլիսիս ընկնէր. Վերև զայիս տեսայ, որ երկու տղայ իրաք հետ զգուելի հայհոյանիներով կուտում էին. մէկը այնպէս կծեց միսի քիմք, որ խեղճը ոչխարի նման բառաշում էր, հազիւ իրարուց բաժնեցին. « Հայրը

տեսնելով՝ որ անկարող է տղայի ստերին հետեւ և այլես ոչ մի պատիժ չի օգնէ, մի նոր միջոցի դիմեց՝ ասելով:

« Լեռն ջան, արի կըլինի ինձ խօսք տուք, Էլ սուտ չխօսես. հաւատա՛, այլես ոչ մի պատիժ, ոչ մի անպատիւ խօսք չեմ ասէ՝ եթէ ավնուաբար բոլոր արածներդ ասես. եթէ ուզում ես հօրդ ուրբախութիւն պատճառել, մի փոքր միսիթաբել, խնդրում եմ այդպէս արա՛. իսկ եթէ այդպէս չանես, հաւատա՛ որ Էլ խնայել չկայ, աւելի խիստ, աւելի անզութ կերպով կըմարուիմ հետզ. այ քեզ առաջուց զգուշացնում եմ, մեզքը քո վիզը. Չնայելով զրան, այնուամենայնիւ տղան ոչ թէ տուտ խօսելը չթողեց, այլ աւելի հնարապէտ զարձաւ և շարունակ ստում էր:

Ինչու այզպիսի հետեանք ունեցաւ, հարցնում էք զուք. չէ որ տղայի համար շատ լաւ կըլինէր, ծեծից անպատութիւնից պատժից ազատուել, սուտ չխօսել և հօրը միսիթաբել. Չէր կարող այդպէս լինել, յարգելի ընթերցող, քանի որ, տղայի համար, հիմայ ստախօսութիւնը սովորութիւն է զարձել, ուտ ասելուց էլ նա չի տմաշում, կարմրում ինչովէս մի ժամանակ էր. այժմ սուտ ասելը նրա համար շատ սովորական բան է զարձել. Միւս կազմից, շատ ու շատ անզամ հօր խստութիւնը, պատիժը, ծեծն ու անպատութիւնը այնշափ էր տղային վախեցրել՝ որ Էլ նա անկարող էր հաւատալ նրան. Ծատ անդամ նա հօրից խստումներ էր լսել, ուզիլը խստառվանել, և էլի պատժուել էր, զրա համար Էլ նրան չի կարող հաւատալ. Բոլորովին ուրիշ բան կը լինէր, երբ տղայի փոքրիկ յանցանիներին ներսպամութեամբ վերաբերուէին, խրատ էին, զգուշացնէին և տղայի մէջ վատահութիւն ներշնչէին. այսպիսի վեպ-

բում իհարկէ հօր խօսքը տղան կ'աշխատէր լսել. կատարել և պակասութիւններից ազատուել:

Դ. Վարձատավորին խոսքանալոց. Այս բանը շատ անգամ առաջ է գալիս նրանից, որ մարդիկ պատուասիրութիւնն ու յիմարութիւնն իրար են խառնում. այսպէս ծնողները երեխն իրանց որդու ճարպիկութիւնն ու քաջութիւնը ցոյց տալու համար, հպարտ հպարտ սկսում են երեխանների ներկայութեամբ, ուրիշների մօտ պատմել. «Ի՞նչ եմ ասում, դօշաղ է, օձին բնից դուրս է բերում, այնպէս որ խորամանկ լեզու ունի. այ հասկանում եմ այդպիսի տղայ ունենալ»: Միւս որդիներն այս լսելով, ամեն կերպ աշխատում են իրանք էլ հօր և միւսների գովասանքներին արժանանալ. զրա համար էլ ուժ ու կող են անում եղբօք նման ճարպիկ լինել և ոչ միջոց չխնայել:

Մի անգամ ծանօթներիցս մէկն, որդիների ներկայութեամբ, ուրախ զուարթ տղաներից մէկի խելօրութիւնը զովելով յայտնում էր: «Ի՞նչ էք ասում պարոն, այնպիսի մի յետ եկածն է, որ չեմ կարող ասել. երեակայեցէք, անցեալ օրը ինձ, մօրը, վարժապետին այնպէս զլիսէ, հանեց և փառաւորապէս խարեց, որ մեզանից ոչ մէկի մտքով չէր կարող անցնել, թէ նա այդափհարապէտ և խելօք է».

— Ասացէք խնդրեմ, միթէ այդ անողը Պարուն էր, հացը ես. —

«Ո՛չ ծիծաղելով վրա բերեց հայրը, միթէ Պարոյըը կարող է այդշափ խելոք լինել. նրա ի՞նչ բանն է այդպիսի բաների մէջ խառնուել, նա դեռ դրանց համար շատ յիմար է»:

— Պարզ է, որ այդպիսի խօսքերով մանուկների պատուասիրութիւնը գրգռում են, նրանք հիմայ կամաց

կամաց կ'աշխատեն իրանք էլ խելոք լինել և զանազան սիջոցներով փշանալ ու մի օր ծնողների, իրանց գըլիին պատիժ դառնալ:

— Լաց մի լինիք սիշունիկս, տեղ եմ գնալու, շնուտ, շնուտ կըգամ. եթէ խելոք մնաս, ձայն չհանես, քեզ համար միրզ կըբերեմ, խաղալիքներ կառնեմ», ասում է մայրը ողղուն և տանից հեռանում է: Մայրը ուշանում է, որդին լալիս է. այ, այ մայրիկն եկաւ, հանգստացնելով ասում է նրան աղախինը: Որդին անհամբեր սպասում է, բայց մայրը չկա. տղան նորից իրանն է կրկնում: Լաց մի լինիք անուշ զան, հանգիստ կաց. «Հեղինէ, տես մայրիկը չի զալիս»: Առաջին անգամը չէր որ մոլորուէր, թէ ի՞նչ պիտի անէ. իսկոյն դուրս է գնում և ուրախ ուրախ ասում է: — Գուրգին զան, մայրիկն եկաւ, գուանը կանգնած կօշիկների ցեխն է մաքրում», Այսպէս և սրա նման խօսքերով մանուկը տեսնում է, որ իրան խաբում են:

Դ. Անվատանալութիւնից, չափազանցութիւններից, ծանրավեռնութիւնից առաջացած սուախօսութիւն. Հազար անգամ ասել եմ, որ քեզանից մարդ դուրս չի գայ» ասում են երեխն ծնողները իրանց որդիներին նոյն իսկ թեթե պակասութիւնների համար. կամ թէ. «Եյսունիտե երբէք շըհամարձակուես, այս առարկաներին ձեռք տալ, եթէ ոչ տեղնուտեղը կ'սպանեմ: «Թող այս վերջին անգամը լինի, եթէ միւս անգամ այդպիսի հայհանք լսեցի, ականչներիցդ կըկախեմ, լեզուդ կըկըտրեմ»: և կամ թէ «Եթէ հայրդ տուն գայ, կ'ասեմ, որ հողիդ հանէ» ասում են մայրերը չարաճճի որդիներին և այլ այսպիսի չափազանց երկիւղներ: Զնայելով այդ ամենին, իհարկէ նրանք ոչինչ չեն անում կամ շատ թեթե պատժում: Այսպիսի դէպքերում որդիները պարզ

կերպով տեսնում են ծնողների չափազանցութիւնները, խօսքի և գործի մէջ եղած հակասութիւնները և քիչ քիչ նրանց ականջներն էլ այդպիսի խօսքերի սովորելով, իրանք էլ սկսում են իրանց ընկերներին, խաղալիքներին, այդպիսի երկիւղներ տալ. «Ես քո հոգին կըհանեմ, անպիտան գնդակ, կամ թէ սպասիր, տես քո դիմին ինչ կը բերեմ գէշ ձի եալին:

Կան ծնողներ, վարպետներ, ուսուցիչներ, որոնք տղաներին իրա ուժերից վեր, շատ գործ, աշխատանք են տալիս և իրատ կերպով պահանջում, որ պէտք է անպատճառ կատարեն: Ի՞նչ անեն տղաները կամ աղջկները. շատերը ուզում են և ամեն կերպ աշխատում են պահանջածն անել, բայց որշափ էլ աշխատում, անկարող են: Այս զէպքերում նոյն իսկ ժամանակը քիչ է լինում կամ իրանց ոյժերից վեր է և կամ անհասկանալի: Այսպիսի զրութեան մէջ նրանք անգամ յուսահատում, իզուր տեղը պատժում, յանդիմանուում են: Իսկ տպէտ, խստապահանջ մարդիկ, սրանցից ոչմէկը ինկատի չունենալով, իրանց արդարացնում են: «Եթէ հիմիկուանից այնպէս խիստ չպահանջեմ և շատ չաշխատեցնեմ, քո տղան ծուլութիւն կըսովորի և անպէտք մարդ կըլինի» հաստատում էր մէկը իր աշակերտի ծնողին. «Պուպիտի ուրախ լինիս, որ տղիդ վրայ այդշափ ուշք են դարձնում և նրան աշխատասէր մարդ պատրաստում»:

Այս տեսակ մտածող մարդիկ, էլ ինկատի չեն ունենում, թէ զրանով տղաներին ուժասպառ են անում, յուսահատեցնում էնրանց մէջ գտնուած իրանդն ու ուժը, բոլորովին ոչնչացնում են: Միթէ այսպիսի զէպքերում իրաւոնք չունին մանուկները ստեր հնարելու, պաշտպանուելու և պակասութիւնների մէջ վարժուելու: Մարդուս անձնական օգուտները անպայման կերպով մղում

են նրան ստախօսութեան մէջ ընկնելու և նրա մէջ առաջ գնալու:

Ե. Կայ մի այլ տեսակ ստախօսութիւն, որի վրայ արժէ մի փոքր կանգնել. այսպէս օր. երբեմն լուսմ ենք այսպիս խօսքեր. «Միթէ հարկաւոր է ճշմարտութիւնն ասել և միթէ դա պարտականութիւն է». կամ թէ, «Ինչու համար պէտք է ճշմարիտն ասեմ, երբ դրանով ոչքի օգուտ տուած չեմ լինի, այլ մէկին կամ միւսին վնաս»: Հատերիս համար անշուշտ տարօրինակ է այսպիսի զատողութիւններ լսել, որովհետեւ շարունակ կարդացնել, լսել ենք դրա հակառակը: Դիո նոյն իսկ շատ խոր հնութեան մէջ մարդիկ այդ կարծիքին էին. այսպէս օր. յունաց մի նշանաւոր բանաստեղծ ասում էր. «Ատելի է ինձ այն մարդն, որն ասում է այն՝ ինչ որ սրտի մէջ չունի». կամ թէ «Պատօնն ինձ սիրելի է, իսկ ճշմարտութիւնն աւելի սիրելի»: Հին ժամանակներից մինչև այսօր ծշմարտութիւնն համարում են դաստիարակութեան, ընաւըստութեան կազմակերպութեան ամենազլիատը իննդիքներից մէկը: Պատիարակութիւնը միայն այն ժամանակ կարող է յաջողութիւն ունենալ, երբ զաստիարակը իր սանիկին լաւ ճանաչում է և ամեն ժամանակ նրա հոգու դրութիւնը հասկանում է: Երբ մանուկը ստելու սովորութիւն ձեռք բերէ, այն ժամանակ նրա մէջ առաջ կըգան ուրիշ շատ պակասութիւններ. այն ինչ ճշմարտութիւնը սովորեցնելով, դաստիարակը միջոց կ'ունենայ այդ պակասութիւնների դէմ կոռուել: Այսպիսով մենք տեսնում ենք, որ ստախօսութեան պաշտպան մարդկանց խօսքերը, ամեն կերպ հակառակ են, հին, նոր նշանաւոր մանկավարժներին, խելօք, փորձուած մարդկանց և առհասարակ սովորական կեանքի ամեն օր կըկնուող փորձերին: 2նայելով

դրան, այնուամենայնիւ մի փոքր տւելի մօտենանք այդ հարցերին և իմանանք նրանց առաջ բերած փաստերի սխալ կողմերը. այսպէս օր: Մի մարդ անուանի հարուստներից մէկին կողոպտում, սպանում է. սպանուածի մօտ ծանօթներից մէկը, իր բարեկամի փողի քսակը սպանողի մօտ տեսնում է, այնպէս որ, եթէ վկաչէր թէ այդ քսակը իր բարեկամ հարստինն է, այս մարդուն պէտք է բռնէին, դատի ենթարկէին: Ծանօթը ինքն իրան այսպէս է դատում: Հարուստը արդէն մեռած կողոպտուած է, էլ նրա կեանքը, հարստութիւնը ձեռք բերել անկարելի է, այն ինչ սպանողն էլ խեղճ է և բազմաթիւ որդիների հայր. եթէ ինձ հարցնեն և ես դատաւորին յայտնեմ՝ մարդասպանին կըբանդարկեն և երկար ժամանակ տաժանակիր աշխատանքի կըմատնեն: Սրանով նրա անմեղ, խեղճ որդիներն առանց կերակրողի, առանց հացի կըմնան. մնում է, որ խեղճերը մուրան ու աւազակի, մարդասպանի գաւակներ կոչուին. սրանով նրանք ոչ թէ միայն հօրից, կերակրողից կը զբկուին, այլև բարի անունից: Այս ամենը նա մտածելով որոշում է շասել մարդասպանի անունը և ինքն իրան հանգստացնելով, աւելացնում է. «Սրանով բարի զօրծ եմ կատարում, երեխաներին իրանց կերակրողից, անունից չեմ զբկում և ոշոքի էլ վնաս չեմ հասցնում»:

Սրա նման դէպքեր կեանքի մէջ քիչ չեն, եթէ մենք էլ այս մարդու նման մտածենք ու վարուենք, այն ժամանակ միթէ զբանով նորանոր շարագործութիւնների, աղէտների առիթ չենք տայ: Դժբաղղացած մարդիկ իրանց ունեցածից կըզբկուին, նրանց որդիքն էլ առանց հօր, թերես թշուառանան և խեղճ մնան. միւս կողմից կարող ենք վատահ կերպով ասել, որ մարդասպանի

տեղ, մի ուրիշ անմեղին չեն բռնէ ու նրա ընտանիքն էլ իզուր տեղը չեն տանջուի. Այսպէս, մի կողմում մարդասպանը պատ իրա համար ապրում է, իսկ միւս կողմից շատերը նրա պատճառով տանջուում են: Պարզ է ուրեմն, որ մենք ճշմարտութիւնը ծածկելով ոչ թէ ոչ մէկին վնաս չենք տայ, այլ ընդհակառակը շատերին նեղ զրութեան մէջ ենք զնում, չարութիւնը, մարդասպանութիւնը քաջակըելով նրանց թիւը շատացնում էնք. հէնց զբանով էլ վնասակար, վատ, անբարոյական ենք. հէնց զբանով էլ վնասակար, վատ, անբարոյական գործ ենք կատարում: Սրա հակառակ, եթէ մենք սուտ շասէինք, այսպիսի բաներ չէր լինի և անպիտանները կըհասկանային, որ ոչ թէ միայն ոստիկանները, այլև ամեն մարդ իրանց հետեւում է և աշխատում են շարութիւնը, վատութիւնը, վնասակարութիւնը պատժել տալուրեմն, այդպիսով շատերը երկիւղից կըզգուշանան, կը վախենան և շարագործների. թիւը կը պակասի: Վեր առնենք մի ուրիշ տւելի հասարակ օրինակ:

Գործարանում ծառայող կառավարչի ու քարտուղարի մէջ ատելութիւն կար. նրանք իրար չէին սիրում, բայց պաշտօնական գործերի մէջ մէկմէկու սովորական բարեկարգանք տալիս էին: Կառավարչի ծննդեան օրը գալիս է նոյնպէս քարտուղարը շնորհաւորելու. կառավարիչն էլ գործերի մէջ թաղուած, ուզում է առանձին մնալ, որ աշխատութիւնը վերջացնէ: Յանկարծ աշխատանքում է լուսամուտին և տեսնում է քարտուղարը գլուխը քաշ զցած, տիուր դէմքով գալիս է դէպի իր տունը. իսկոյն գլխի է ընկնում, կանչում է աղախնուն և ասում է. «Եթէ ինձ հաշցնող լինի. ասա տանը չէ»: Այսպէս էլ իինում է. քարտուղարը ուրախ ուրախ ժպիտն երեսին յետ է դառնում, իսկ կառավարիչն էլ գոյն սրտով ինքն իրան ասում է. «Երկու օպտակար

բան եղաւ. մէկ, $\frac{1}{2}$ ժամ աւելի ժամանակ ունեցայ զործերս առաջ տանելու. մէկ էլ, ինչպէս ինձ, նոյնպէս էլ նրան անդուրեկանութիւնից ազատեցի, ուրեմն երկուսիս էլ առաւելութիւն»:

Նոյն ժամին, կառավարչի երբեմն աշակերտական ընկերներից մէկը, վերին տստիճանի ընտանեկան նեղ զրութեան մէջ լինելով, վերջին փորձն է անում, գալ նախկին ընկերից մի քանի րուբլի խնդրել, որ օրերով քաղցած որդիներին սովից ազատէ. բայց աւաղ: Այստեղից էլ վերջնական յոյսը կտրելով՝ ինքնասպանութեամբ է զործը վերջացնում, որովհետև կառավարչի աղախինը նրան էլ էր նոյն պատասխանը տուել, ինչ քարտուղարին, այսինքն տէրը տանը չէ եալն:

.VI.

ՄԻ ՔԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒՍ ՍՏԱԽՕՍՈՒԻԹԵԼՆ ԴՀՄ

Երբեմն հասկացող մարդիկ, ծնողները, նոյն իսկ մանկավարժները, մանուկների ստախօսութիւնը ընական համարելով, անուշաղիր են թողնում: Սրանց կարծիքով երբ տղան խելահաս դառնայ, բոլորն ինքն իրան կ'անցնի. այնինչ, ինչպէս մենք իմացանք, այդ կարծիքները սխալ են: Դժբաղզաբար շատ ծնողներ հասկանալով կամ բանի տեղ շնորհով տղայի ստախօսութիւնը, ոչ թէ միայն ուշը չեն դարձնում, այլև աւելի զարկ են տալիս այդ պակասութեանը: Այսպէս, երբ նրանք որևէ բան իրանց թոթով մանկական լեզուով, սուտ ու սխալ պատմում են՝ ծնողների քէֆը զալիս է, ուրախանում, հըսհըռում են. «Անուշ ջան, ճուտիկս,

աղաւնիս, շատ լաւն ես, ինչ քաղցը ես պատմում» ասելով՝ մանուկներին քաջալերելով, խոստումներ են անում, որ նորից պատմէ, կրկնէ, հիւրերի առաջն էլ ասէ: Սրանք էլ իհարկէ զովում, համբուրում են: Այսպիսով մանուկները ոչ թէ իրանց ասած անցշղութիւնը, սուտը չեն հասկանում, այլ աւելի քաջալերուելով, սկսկում են ծիծաղաշարժ ձեերով, ծամածութիւններով պատմել. սրանից յետոյ, հետգհետէ փոքրիկ զետակից ստեր էլ են յօրինում: Այսպիսով սուտը, շափազանցութիւնը մտացածինի հետ խառնուելով՝ հետըզհետէ ճշմարտի զաղափարից հեռանում են, ստախօսութեան պակասութեան մէջ ընկնում:

Ստախօսութեան առաջն առնելու միջոցները հասկանալու համար, պէտք է ամենից առաջ իմանալ սուտ խօսելու պատճառները, թէ ինչուց են առաջ գալիս. ինչպէս այդ պատճառները հեռացնել. ապա որոշել ստախօսութեան տեսակները, ժառանգական, ստացական, զիտակից, թէ անդիտակից, մանկան կազմութիւնը, շրջապատը և նրա ազդեցութիւնը: Այսպիսի ժամանակներում, իհարկէ չպէտք է թուլանալ, այս ու վախ քաշել, սրան նրան մեղազըել. այլ պէտք է զիտութեան տուած զէնքերով, առանց վախենալու կըռուել. ճիշդ այն հմտա բժիշկի նման, որը հիւանդի վէրբերն անխնայ կերպով կտրում, ցաւեցնում և սպեզանիներով նորից բժշկում է: Ստախօսութեան բժշկութեան մասին վերեսում բերած օրինակներով ծանօթացանք. այժմս էլ մի երկու այլ միջոցներ բերելով բաւականանք:

Ճշմարտութեան էութիւնը մանուկների մէջ ամբացնելու ամենալաւ միջոցը համարւում է լաւ օրինակը: Ծնողների ուսուցիչների, խնամակալների անձնական օրինակը

մանկան համար կենդանի տռաջնորդ է: Երբ տղան ամեն մի քայլափոխում, ներսում տան մէջ, զրսում, փողոցում, ընկերների հետ գործ ունենալիս, ծնողների հետ վարուելիս, հասարակական այս կտոմ այն խնդրում, մի խօսքով ամեն մի գործում որոնում է ուղիղ, ճշմարիտ վարմունք, խօսք, գործ՝ այսպիսի դէպքերում անպատճառ ինքն էլ նրանցից օրինակ է առնում և նմանում: Սրանից յետոյ եթէ մինչև անգամ պատահի, որ մանուկները գիտակից կամ անզիտակից կերպով իսկական եղելութիւնից շեղուին, հեռանան, այն ժամանակ դաստիարակը պէտք է նրանց մեզմ համբերութեամբ, հայրաբար առաջնորդելով՝ իսկութեան վրայ կանգնեցնէ: Երբ օրերով, ամիսներով, տարիներով այս բանը կը ըլուուի՝ այն ժամանակ բնականաբար մանկան մէջ ճշշմարտախօսութիւնը, ուղիղ ասելը կը դառնայ միս ու արիւն—սովորութիւն, այն ժամանակ էլ շատ գժուար է նրանց իրանց ճանապարհից զուրս բերել: Ճնորհիւ մանկան ծնողների, ուսուցչի կամ դաստիարակի, նրա բնաւորութիւնը, հաստատուն համոզմունքը, որոշ բաների համար արդէն անխախտելի է լինում: Այսպիսի ուրախալի դէպքերում, մանկան և դաստիարակի մէջ, ներքին, բարոյական մտերիմ կապ է հաստատում: Մի կապ՝ որի լուծելը, կարող եմ տաել անկարելի է: Դաստիարակը այժմ նրա ամենամօտիկ, ամենասիրելի մարդն է դառնում, այն, նրա կուոքն է և լուսաւորութեան ճանապարհ հարթելու փարոսը հանդիսանում: Ահա այդ ժամանակ մենք կարող ենք տաել, որ նա իր դաստիարակին վստահանում է: Ինց այս վստահանութիւնն է նրան ամեն գործի մէջ ոյժ, եռանդ ներշնչողը: Ահաւասիկ այն մեծ զաղանքը, որ երկու անհատի մշտական կապում է. այն ժամանակ դաստիարակի

խօսքը նրա համար սրբութիւն է, այն այն, է, և ոչնոշ, նրա պատուէրն, էլ ոչ մի կասկածի չի ենթարկուի, այլ միայն սիլով այդ կ'անէ, քանի որ հազարաւոր փորձերից զիտէ, որ զրանից ինքը օգուտ ունի, իր ազատութիւնն, ուրախութիւնն ոչ թէ չի սահմանափակուի, այլ աւելի ու տւելի կը լայնանայ: Սրան պէտք է վերագրել այն ուժը, որ տասնեակ տարիներով իրարուց հեռացած, զնացած դաստիարակների արժանիքը՝ սաները հպարտութեամբ, առանձին բաւականութեամբ յիշում և ուրիշներին օրինակ են բերում:

«Այ, այզպիսի մարդիկ պիտի լինին, որ աշխարհը կարողանան շարժել, գործ առաջ տանեն ևայն»:

Երբ մանուկը վստահանում, հաւատում է դաստիարակին և եթէ պատահի, որեւէ դէպքից ստիպուած սուտասէ, նպատակով խաբել ուղենայ՝ ահա այդ ժամանակ մանուկն անշուշտ ինքն իրան կարմրում, շփոթում, մինչև անգամ լալիս է: Այս նշանակում է, մանկան հոգու կազմութեան մէջ կեղծիքի, ստի պատկերացումներ այնշափ քիչ են, լաւինը, բարունը, ճշմարտինը, նրան ճնշում, ստիպում են երկուսի մէջ մի տեսակ կորիւ առաջ բերել: զրա համար մանուկը իրան լաւ չի զգում, կարմրում, ամաշում, անհանգիստ լինում և վերջը խոստովանում է յանցանքը: Մանկան այսպիսի հոգեկան, ներքին տանջանքը—զզջումը՝ նշան է նրա մաքրութեանը, փշացած չլինելուն, որ նա զգում է իր կատարածի վատութիւնը, պատրաստ է ուղղուել, լաւանալ և առաջ զնալ: Այսպիսի ժամանակ ահա պէտք է ծնողները, դաստիարակները և խնամակաները շատ զգուշ լինին: Նրանք համբերութեամբ, հանգստութեամբ, առանց ծաղը ու ծանակի, հայրաբար պէտք է նրան մօտենան, վստահութիւն ներշնչեն և ուղիղը, իսկակա-

Նը կատարել տան։ Բարկութիւն, երկիւղ, սպառնալիք կամ պատիժներ տալ՝ նշանակում է նրա վստահութիւնը, նրա յոյսը խախտել, ստիպել նոր նոր կեղծիքների ստի, խարդախութեան յետեից ընկնել և դրանց մէջ վարժուել։

Դաստիարակի և սանիկի մէջ փոխադարձ վստահութիւն, սէր առաջ բերելը, միակ կախարդական զինքն է, որը խորհուրդ ենք տալիս բոլոր գաստիարակներին ինչ կերպով էլ լինի ձեռք բերել։ Այդ կախարդական զէնքի միջոցով, շատ լաւ հնարաւորութիւն կունենանք մանուկներին ուղղել, դէպի ճշմարիտը, բարին ազնիւը առաջնորդել, կըթել և դաստիարակել։

Սրա հակառակ, երբ դաստիարակի և սանիկի մէջ ներքին կապ անձնական վստահութիւն չինի՛ այդպիսի դէպքում սուտ խօսել, կեղծել. վշանալ, ճշմարտութիւնը ոտքի տակ տալ, սրբութիւնը չճանաշել և սրանց նման անբարոյական դէպքերը՝ միշտ անպակաս են լինում։ Ի՞նչ օրինակ են առնելու աղջիկն ու տղան, երբ մանկական հասակից սկսած մինչև երիտասարդութեան հասնելը, շարունակ տանը ծնողներից զանազան ստութիւններ են լսում—ինչպէս. «Հայրիկիդ շասես, թէ այս մարդը մեր տուն եկաւ», կամ երբ մանուկը միրդ է ուղում՝ լուրջ կերպով յայտնում է. «Ել չկայ գառնուկ ջան, սպասիր հայրիկը բերէ էլի կը տամ», բայց մի ըստէ չանցած հիւրեր են գալիս, ահա պահարանը բացուելով մրգեղինները մանկան աչքի տռաջն է դուրս դալիս։

— Հապա ասացիր չկայ, թոթովում է փոքրիկը. Մի մայր էլ տեսնելով, որ աղջիկը մուրաբա շատ է ուզում՝ լուրջ կերպով յայտնում է, «Ել չի կարելի ուտել, մուրաբի մէջ մուկ է ընկել, պէտք է տէրտէրը զայ, օրհնէ որ նոր ուտուի»։

«Բայց մայրիկ, երբ է տէրտէրը այստեղ գալու».

— Նա գործ ունի, Անուշ ջան, զեռ տղայ պէտք է կնրէ, եկեղեցի զնայ, ժամ ասէ և երբ վերջացնէ՝ նոր զայ մեզ մօտ».

— Ասա մայրիկ, շատ ուշ է այդ լինելու։

«Այս գսարիկս, երբ ձմեռը զայ՝ նոր»։ Մօր լրջութիւնը աղջկան այնշափ համոզեց, որ նա անձայն հեռացաւ։ Մի երկու օրից յետոյ, հիւրեր եկան, մայրը ամանները լիքը մուրաբա լցրած առաջ բերեց։ Փոքրիկ Անուշի աշքերը պսպղացին, էլ չհամբերելով, իսկոյն վագեց հիւրերի մօտ և քաղցրիկ թոթով լեզուով վրայ վրայ ասաց. «Գիտես տիկին, էղ չի կարելի ուտել, մայրիկն ասում է մուկ է ընկել մէջը, տէրտէրը պիտի զայ, օրհնէ, որ նոր կարելի լինի ուտել»։ Հիւրերը ժպտալով յայտնեցին, թէ էղ քեզ համար է և ոչ մեզ և մի գգալ էլ աղջկայ բերանը զրեցին և այլ սրա նման բազմաթիւ օրինակներ։ Այսպիսի դէպքերում, վաղ թէ ուշ, ծնողի, խնամակալի, դաստիարակի, մանկան կեղծութեան դիմուկը պիտի պատռուի և փոխադարձ ատելութիւն, հեղինութիւն, անվստահութիւն առաջ զայ։ Հէնց այդ պատճառներով, այս տեսակ մարդիկ իրաւունք չունին ուսուցութեան, ծնող լինելու, դաստիարակչութեան, խնամակալութեան սուրբ պաշտօնի մէջ մտնելու։ Սրանք միմիշայն պատճի, արհամարանքի և դատապարտութեան են արժանի՝ ինչպէս և շատ անզամ իրաւացի կերպով որդիների կողմից այդպէս էլ լինում է։





ՀՀ Ազգային գրադարան



NL0150250

3960